Ազգ
Azg
7-13 ՀՈՒՆԻՍ 2024 ՈՒՐԲԱԹ 020(5802)
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ISSN: 1829-1651

# Դեսպան Աղաեւը հրեաների իրավունքը բա՞րձր է դասում

ԳԴՀ-ում Ադրբեջանի դեսպան **Աղաեւը** հունիսի 4-ին X-ի հարթակում գրառում էր արել՝ «հայկական ԶՈՒ-ն Ղարաբաղում պատանդառել, այնուհետ բռնությամբ սպանել էր19-ամյա ադրբեջանցի հրեա **Վուգար Բեն Ավրահամ Միխայլովին**»՝ կցելով ամերիկաբնակ հրեա օգտատիրոջ ամբողջական պատմությունը տղայի մասին, որ լուսաբանում էր, թե ցայսօր անհայտ է 90-ականներին Ջրականում (Ֆիզուլի) պատանդառվածի ճակատագիրը, ընտանիքը սպասում է նրա վերադարձին: Հայաստանը Վուգարի մասին պետք է իրազեկի: «Թե Գազայում պատանդառվածների համար աղոթելու եք, հավելեք նաեւ Վուգարի անունը», սա էլ խնդրանքն էր: Այս պատմությունը հունիսի 2-ից շրջանառում է նաեւ ԱՄՆ ադրբեջանահրեական համագումարը՝ Աղաեւի հենարանը: Մարդկայնորեն հասկանալով ողբերգությունը, ընկալելի չէ, որ Աղաեւը միայն մեկի պատմության բացահայտումն է հետապնդում. Հրեաների իրավունքը բա՞րձր է դասում:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Ծանր ժառանգություն հաջորդ իշխանություններին

**Ազգային բանակի մարտունակության հետ անցնող մի քանի տարում մենք կորցրեցինք նաեւ ներքին անվտանգության ուժերի, առաջին հերթին՝ ոստիկանության ու քննչական մարմինների նկատմամբ վստահությունը, որը վերջին 30 տարիներին, նախորդ կառավարությունների ջանքերով, այս կամ այն չափով հաստատվել ու վեր էր բարձրացել սովետական «միլիցիայի» ու «օրգանի աշխատողների» հոռի բարքերից: Այժմ ոստիկանությունը վերածվել է պատժիչ ջոկատների, իսկ քննչական մարմինները վերադարձել են «Տիտանիկը խի՞ ծակիր, արա՛, բզո՞վ ծակիր, արա՛» բարքերին:**

**Օրերս ուսանողներիս հարցնում էի, թե մասնակցո՞ւմ են քաղաքացիական անհնազանդության ակցիաներին: Պատասխանը եղավ խորշանքը՝ այլապես կարեւոր այդ ինստիտուտների հասցեին: «Մասնակիցներին ծեծում են», եղավ ուսանողներից մեկի պատասխանը, «խոշտանգում են», լրացրեց մեկ ուրիշը:**

**Քաղաքացիական հասարակության, օրենքի գերակայության, հանրային կարգուկանոնի պահպանման տեսակետից վտանգավոր, մտահոգիչ այս վիճակը, դրա տխուր հետեւանքները կարծես ոչ ոքի չեն հետաքրքրում,- նկատի ունեմ գործող իշխանությանը: Վերջինին չի մտահոգում անգամ ոստիկանական ուժերի պրոֆեսիոնալ առումով կատարյալ խեղճությունը: Առնվազն 3-4 ոստիկան է «գործի» լծվում մեկ հոգու ձերբակալելու, 4-5 ոստիկան՝ ձեռնաշղթաներ անցկացնելու համար, այն էլ՝ ենթակային գետին տապալելուց, վրան մի լավ նստելուց հետո: Հուժկու երկու ոստիկան հազիվ են կարողանում որդեկորույս մոր ձեռքերը զսպել, իսկ երիտասարդ մի ցուցարարի ոստիկանական մեքենա խցկելու համար կսմթում են նրա քամակը՝ արժանանալով վերջինիս հեգնանքին՝ «կճմթելու հասուկ կուրսե՞ր եք անցել»...**

**Կարմիր ու սեւ բերետավոր ոստիկանական ջոկատները, այս օրերին, ցուցարարների բազմության մեջ մխրճվում են սովալլուկ գայլերի նման, շատերի վրա թողնելով «փոշեկուլածների» տպավորություն, արատավորելով ոստիկանի, հանրային կարգուկանոնի պահապանի համբավը, պատիվը, պետական ծառայողի նկատմամբ հարգանքը, բայց պետական ոչ մի օղակ, պետական ոչ մի դեմք չի զսպում նրանց: Բոլորը ծառայում են մի անձի, որը մի քանի տարի առաջ, պարեկային ծառայության ներդրման օրերին, հրճվանքով ասում էր, թե ուսուցիչները թողնում են իրենց ասպարեզը եւ աշխատելու դիմում ներկայացնում նորաստեղծ այդ կառույցին, որտեղ մի քանի անգամ բարձր են վճարում: Բարոյապես խեղված մի պատկեր՝ ուսուցիչը՝ ոստիկան:**

**Ու երեւակայել, որ օրերս «հեռավոր երկիր նստած (մի) նժդեհ, հայրենյաց կյանքին մոտուց տեղյակ»ի հովերով տարված՝ մեր ժողովրդին ամերիկյան դասեր է տալիս ոստիկանության պահվածքի մասին եւ ամերիկացի ցուցարարներին համեմատում «Սրբազան շարժման» մասնակից բազմությունների հետ, հղնթացս փորձելով «վրաերթի» ենթարկել Վեհափառ Հայրապետին: Մայր կուսակցության պատմությանը եւ ավանդույթներին ծանոթ յուրաքանչյուր հայի զարմանքը շարժող պրոնիկոլական այդ բարբաջանքներին, բարի թե չար նախանձով, երեկ միացավ նաեւ ռամկավար=դեմոկրատ եւ ազատական=լիբերալ ազնիվ գաղափարախոսության քղամիդ հագած քյալլագոզների տրինը՝ տեղական մուրացիկների մի խմբակի հետ: Իշխանությունների մոտ հերթական գաստրոլների եկած այդ խմբակը, ինչպես տեղեկացանք նրա անգրագետ հաղորդագրությունից, պատրաստվում է «քծնողական պայմանագիր» կնքել իշխանավորականների հետ՝ ընդդեմ Շարժման ու Եկեղեցու, հօգուտ Հայաստանում բռնատիրական կարգերի տեւականացման:**

**Այդ կարգերի պահապանն ու կասադի պաշտպանը՝ ընդդեմ բողոքող-ընդվզող ժողովրդային զանգվածների, հանուն փողի ու պարգեւավճարների, ոստիկանությունն է դարձել, գերազանցելով սահմանադրական իր իրավունքները, ոտնակոխ անելով հասարակության իրավունքները:**

**Ահա թե ինչու մեկ անգամ եւս պետք է կրկնել, որ մեր երկրի հաջորդ իշխանությունների համար դժվար, շատ դժվար է լինելու. պետական ինստիտուտները, բանակն ու հատկապես ոստիկանությունը, նրանց աշխատանքն ու գործառույթները օրինական դաշտ բերելու, դրանք բնականոն կյանք վերադարձնելու համար: Ժառանգությունը, որը կստանան նոր իշխանությունները, լինելու է սարսափելի ծանր, աշխատատար, զոհաբերություն պահանջող, գուցե եւ՝ անշնորհակալ:**

**ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ**

# Կյանքը քաղաքագիտական դասագրքերից դուրս

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Ազգային ժողովի հանձնաժողովներում ընթացող անցած տարվա բյուջեի կատարողականի քննարկումներից հնարավոր չէ իրական պատկերացում կազմել կառավարության աշխատանքի իրական որակի մասին այն պատճառով, որ դրանց ժամանակ իշխանական պատգամավորների եւ բուն կատարողականը ներկայացնողների օգնությամբ մի իդիլլիկ պատկեր է գծվում, իսկ ընդդիմադիր պատգամավորների տված հարցերի եւ գնահատականների շրջույթով մի աննախադեպ անպիտան, դավաճան ու դիտավորյալ տնտեսությանն ու արտաքին հարաբերություններին վնասած կառավարության պատկեր է հառնում:




Իսկ թե ի՞նչ վիճակ է տնտեսության մեջ, ինչպե՞ս վերաարտահանման արատավոր շրջանից դուրս գալ, ինչպես ավելի հեռանկարային շուկաներ գտնել, ինչպես առաջ տանել սահմանազատումն ու արտաքին կապերն այնպես, որ ազգային շահերը չվնասվեն, այլեւայլ խնդիրներ՝ սրանց մասին ամբողջական պատկերացում դժվար է կազմել: Այնպես որ խեղճ շարքային քաղաքացին, եթե մտադրվել էր այս քննարկումներով իմանալ, թե ինչպե՞ս է աշխատում իր վարձած կառավարությունը, ստույգ պատկերացում կազմել այդ մասին, հազիվ թե հանձնաժողովների ուղիղ հեռարձակվող քննարկումներից դա կարողանար իմանալ, քանի դրանք դառնում են քաղաքական ճակատամարտեր կամ ինքնագովության շրջագիծ: Եւ անգամ այդ քննարկումների շուրջ լրագրողների ստեղծած օրակարգն է վերը նկարագրվածի ծիրում, ինչն իհարկե մարդկանց իրազեկումն ապահովելու թիվ մեկ տեղեկատվական խնդիրը չի լուծում՝ նույն քաղաքական պատճառներով:

Խորհրդարանից դուրս էլ նույնն է կատարվում: Տավուշում աղետ է, նորմալ իրականության մեջ ողջ մարդկային ու տեխնիկական ներուժը պետք է որ աղետյալ գոտի ուղղվեր, մինչդեռ մերոնք իրենց պահում են այնպես, ասես դա հենց միայն տավուշցիներին ու մեկ-երկու գերատեսչության է վերաբերում, ու մեր հանրության ողջ երեսպաշտությունը, որը հաճախակի տեսել ենք պատերազմի, Արցախը թշնամուն թողնելու օրերին (առանձին մարդկանց սրտացավությունը չհաշված), լավ երեւում է նաեւ այս դեպքում:

⇨3

# Տրիլիոննե՞րի դիմաց՝ Ալիեւի Ֆաշիզմը բնապաշտություն է դառնում

*Բոննում այսօր էլ լսվելու է հայերի ձայնը՝ «Ալիեւին՝ Հաագա», «Ռազմագերիներին՝ անհապաղ վերադարձ»*

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Բոնն**

Հունիսի 3- 13-ը Բոննում ՄԱԿ-ի հովանու տակ անցկացվող Կլիմայի փոփոխություններին նվիրված համաժողովին, որ Բաքվում նոյեմբերի 11-24-ին գումարվելիք COP29-ի համաժողովի նախապատրաստական փուլն է, մասնակցում է մոտ 6000 պատվիրակ՝ աշխարհի տարբեր երկրներից: Բոննը ՄԱԿ-ի Կլիմայի հարցերի քարտուղարության նստավայրն է եւ ամեն տարի հունիսին դառնում է Կլիմայի համաշխարհային համաժողովի նախապատրաստման վայր: Հավաքի նպատակն է լուծում գտնել կլիմայի ֆինանսավորման վիճահարույց խնդրին: 2009-ից ի վեր սահմանվել է, իսկ 2015-ին Փարիզի կլիմայի համաձայնագրում մինչեւ 2025 թվականի համար հաստատվել, որ արդյունաբերական զարգացած երկրներն ամեն տարի 100 միլիարդ դոլար տրամադրեն աղքատ երկրներին: Սակայն հիմա միլիարդները չեն բավարարում, տրիլիոններ են պահանջվում կլիմայական վնասի վերացման եւ կլիմայի պաշտպանության համար, մեկնաբանում են մասնագետները, ընդգծում, որ շատ երկրներ չեն կարողանում հրաժեշտ տալ հանածո վառելիքին, ներդրում կատարել քամու, արեւային, կանաչ էներգիայի կիրառման մեջ:

Ի՞նչ կլինի 2025-ից հետո, հստակ որոշում պիտի կայացվի Բաքվում, որ թե՛ հանածո վառելիքով, թե՛ արեւի եւ քամու, կանաչ էներգիայի խոստումով, դրանից առաջ եւ հիմա էլ խավիարով ու դոլարով կապել է համաշխարհային հանրության լեզուն, իսկ Բոննում, Գերմանիայում նույնիսկ բնապահպանները, Կանաչները Բաքվի անունը քննադատությունից հանել են... ում հետ խոսում ես, ԼՂ-ի մասին էլ շատուքիչ գիտեն, ինչպես նաեւ այն, որ Բաքուն վտանգավոր քաղաք է, բայց նոյեմբերին տեղում հետեւելու որոշում ունեն, հիմա չեն խոսում ...բնապահպան ակտիվիստները, որ քաղաքական գործիչներից ընդօրինակել են դատարկ խոստումներով «լռեցնել» լրագրողներին, վստահեցնում են, թե Բաքվում կխոսեն... Նրանք չե՞ն դիտել գերմանացի հետաքննողների ֆիլմը (տե՛ս «**Ազգ**»ի 2024-ի մարտի 7-ի մեր անդրադարձը-Ան. Հ.), որ հուշում է, թե Բաքվում խոսողը կա՛մ բանտում է հայտնվում, կա՛մ պատահարի զոհ դառնում: Բոննի համաժողովին ջանում են առավելագույն նախապատրաստական աշխատանքն անել՝ ոչ միայն փորձագիտական քննարկումների, այլեւ բանակցությունների միջոցով՝ փորձելով հասնել առարկայական արդյունքի:

Այդպիսի հաջողված բանակցության մասին էր ոգեւորված պատմում հեռուստալրագրողների մի թիմ, որ դրսում հարցազրույցը վերջացնելուց հետո դրա մասին մեզ ծանուցեց:

⇨3

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

# Պատմութեան վրայ վարագոյր չի քաշուիր

Մօտ կէս դար առաջ ձեռքերնիս անցաւ շատ հետաքրքրական գիրք-աթլաս մը, որ հին գիրքերու, լուսանկարներու, ձեռագիրներու եւ զանազան իրերու հաւաքորդ համեստ հալէպահայ երիտասարդ մը գնած էր տեղացի հնահաւաքէ մը: Գիրքը 1911-ին տպուած, հրատարակութիւնն էր Օսմանեան կայսրութեան ռազմական նախարարութեան, որուն մէջ հռոմէական շրջանէն սկսեալ Մերձաւոր Ասիոյ երկիրներու եւ բնակչութեան քարտէսները տպուած էին իրենց օսմաներէն տառերով եւ անուններով: Իրերայաջորդ քանի մը քարտէսներու մէջ յստակ կերպով պատմական Հայաստանի տարածքին վրայ գրուած էր «Էրմէնիստան» եւ յարակից պետութիւնները, սակայն քրտական շրջաններուն վրայ բնաւ չէր գրուած «Քիւրտիստան», այլ՝ «Քիւրտլէր» (Քիւրտեր): Այս փաստաթուղթը նոյնինքն հայերու պատմական հայրենիքը մերժող թրքական կառավարութեան խոստովանութիւնն էր, որ հայերը նախքան Քրիստոս ընդարձակ կայսրութիւն մը ունեցած են, որ տեւած է մինչեւ Բագրատունիներու անկումն ու Անիի յանձնումը:

Քարտէսագիրքը լուսահոգի նպարավաճառ-թատերական գործիչ **Խորէն Փիլաւճեանի*** հաւաքածոյէն էր, գտնուածը օգտագործելու մղողը լուսահոգի ոսկերիչ-թատերական գործիչ **Վահէ Սամուէլեանն*** էր, որուն հետ գործակցաբար սկսանք հանրութեան ուշադրութեան յանձնել գիրքին պարունակութիւնը՝ գրելով, քարտէսներուն նկարները լուսանկարելով եւ մեծցնելով ու ցուցահանդէսներ կազմակերպելով Հալէպի եւ Դամասկոսի ՀԵԸ-ի ակումբներուն մէջ:

Ոչ ոք կրնար կասկածիլ անոնց իսկութեան, քանի որ պաշտօնապէս պետական հրատարակութիւն էր: Անշուշտ շատ ու շատ եւ այլազան փաստաթուղթեր գոյութիւն ունէին հայերու անցեալի պետականութիւնը փաստող, սակայն այս մէկը տարբեր էր եւ մեզի ըսել կու տար՝ «Ի բերանոյ քումմէ դատեցայ»:

Հայ թէ օտար՝ յոյն, արաբ, ասորի եւ այլ պատմաբաններ, ճանապարհորդներ եւ շատ ուրիշ հնադարեան հեղինակներ գրած եւ անդրադարձած են հայերուն, անոնց երկրին մասին, անոնց թագաւորներուն մասին, հայկական ճարտարապետութեան, մանրանկարչութեան, խաչքարերու, երաժշտութեան, բանահիւսութեան, գրականութեան, նոյնիսկ կենցաղի մասին, դասելով Հայաստանն ու հայերը որպէս հին աշխարհի ամենազարգացած ազգերու շարքին: Այս բոլորով հանդերձ, երէկ տակաւին անուն ու գոյութիւն չունեցող մեր դրացի թշնամին կը համարձակի կասկածի տակ առնել այդ բոլորը եւ ըսել, թէ մեր անցեալի պատմութիւնները անհիմն են ու առասպելական...:

Ամէն բանի կարելի է հանդուրժել, սակայն այսքան կուրութեան, այսքան լկտիութեան ու պատմութեան խեղաթիւրումի մարդ չի կրնար հանդուրժել: Սակայն, որո՞ւ կ'ըսես, որո՞ւ կը քննադատես, երբ այս ամօթանքին ձայնակցող կայ մեր պատասխանատուներէն, որոնք կ'ուզեն որ մոռնանք անցեալնիս եւ ներկային նայինք ու ապագանիս կերտենք: Բայց չէ՞ որ որեւէ կառոյց առանց հիմնաքարի կանգուն չի մնար, սոսկ աւազի վրայ շէնք չեն բարձրացներ, առանց մեր անցեալին անհնար է ներկան ու ապագան կերտել:

Անանուն ազգեր, որոնք պատմութեան մէջ մտած են անակնկալօրէն, յիշատակութեան արժանի անցեալ չունենալնուն՝ ի՜նչ միջոցներու դիմած են կեղծ անցեալ մը շինելու եւ աշխարհին ցոյց տալու, որ իրենք ալ մոռացութեան տրուած ու հիմա նոր լոյսին եկող նկատելի անցեալ մը ունեցած են: Ագռաւը որքան ալ սիրամարգի փետուրներով զարդարուի, սիրամարգ չի դառնար: Ան չի յաջողիր իր սուտը կլլեցնելու, ատոր համար ալ կ'ելլէ իսկական, հպարտառիթ անցեալ ունեցողի անցեալին վրայ վարագոյր կը փորձէ քաշել:

Ինչպէս որ կ'ըսեն՝ «Արեւին վրայ վարագոյր չի քաշուիր», այդպէս ալ արեւու նման յստակ ու պայծառ փաստերուն վրայ ալ վարագոյր չի քաշուիր: Դեռ կ'ըսեն՝ բնիկ չենք, եկուոր ենք, իրենցմէ մէկը դեռ հազար տարի առաջ գոյութիւն չունէր, իսկ միւսին ինչ ըլլալը դեռ հարիւր տարի առաջ յայտնի չէր, բայց կը յանդգնին մի քանի հազարամեակ պատմութիւն ունեցող ազգի մը անցեալը ուրանալ: Վատն ու վտանգաւորը այն է, որ դրամով գրողներ, նոյնիսկ պատմաբաններ ու քաղաքական դէմքեր կը գնուին ու արդարութիւնը ոտքի տակ կ'երթայ:

*** Ես սովորաբար անուններ չեմ տար, սակայն այս պարագային ուզեցի ցոյց տալ, որ հալէպահայ ազատ ասպարէզի մարդիկ յաճախ ազգասիրական լուրջ աշխատանք կը տանին յանուն մեր դատին ու փառապանծ անցեալին: Դժբախտաբար Հալէպի վրայ եղած հրթիռակոծումներուն զոհ գնաց Խորէնի բնակարանը եւ իր ամբողջ հարուստ հաւաքածոն: Սամուէլեանի գործակցութիւնն ալ անոր արխիւներուն հետ, արդիւնաւորուեցաւ իր հեղինակութեամբ երկու հատորներով, որոնք վերնագրուած էին «Հայ անցեալը լուսանկարներով»: Անոնք միշտ կը յիշուին, հանգիստ իրենց հոգիներուն:*

# Ամեն ինչ Իրանի արտահերթ նախագահական ընտրությունների մասին

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

Իրանի ներքին գործերի նախարարության հայտարարության համաձայն, ԻԻՀ արտահերթ նախագահական ընտրություններին մասնակցելու ցանկություն ունեցող անձանցից միայն 80-ին է հաջողվել գրանցվել ՆԳՆ ընտրությունների ընթացքն ապահովող շտաբի ցուցակում:

Մայիսի 20-ի ողբերգական ավիավթարի հետեւանքով ԻԻՀ նախագահ **Էբրահիմ Ռայիսիի** մահվանից հետո, գործող Սահմանադրության համաձայն, տեղի են ունենալու արտահերթ նախագահական ընտրություններ: Այդ համապետական միջոցառումը նախատեսված է անցկացնել հունիսի 28-ին:

Գրանցվելու համար նախատեսված հնգօրյա ժամկետում ԻԻՀ նախագահական ընտրություններին մասնակցելու հայտ են ներկայացրել 287 հոգի, սակայն, հաշվի առնելով թեկնածուների համար սահմանադրությամբ նախատեսված պայմանները, նրանցից ընդամենը 80 հոգու ցանկն է ներկայացվելու թեկնածուների որակավորումն իրականացնող Սահմանադրության Պահապանների խորհրդի «դատին»:

Պահապանների խորհուրդը հավանական թեկնածուների շարքում ավելի շատ կենտրոնանալու է այն անձանց վրա, որոնք առանձնանում են երկրին մատուցած իրենց ծառայություններով ու զբաղեցրած դիրքերով:

Այսպիսով, ընտրություններին մասնակցելու հնարավորություն կարող են ունենալ հետեւյալ անձինք, ինչպես նաեւ մեր հրապարակման մեջ չներառված այլ հավակնորդներ, որոնց լիազորությունների մերժումն ավելի հավանական է.

**Սաիդ Ջալիլի**

Ներկայումս Սաիդ Ջալիլին Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդում ԻԻՀ Հոգեւոր առաջնորդ **Ալի Խամենեիի** ներկայացուցիչն է եւ «Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող» խորհրդի իսկական անդամը: Նա նախագահական ընտրություններին երկու անգամ ներկայացրել է իր թեկնածությունն ու երկու անգամ էլ հաստատվել նրա լիազորությունը, սակայն ընտրվելու համար բավարար քանակությամբ քվե չի ստացել:

Վերջին նախագահական ընտրություններում Ջալիլին երկրորդ փուլում հօգուտ Էբրահիմ Ռայիսիի ինքնաբացարկ է ներկայացրել:

**Մոսթաֆա Փուրմոհամմադի**

Հոջջաթ օլ-Իսլամ Մոսթաֆա Փուրմոհամմադին Իրանի դատաիրավական համակարգի վաստակաշատ ներկայացուցիչներից է: Նա **Ահմադինեժադի** առաջին կառավարությունում ներքին գործերի նախարարի պաշտոնն էր զբաղեցնում, իսկ Ռոհանիի առաջին կառավարությունում՝ արդարադատության նախարարի: Փուրմոհամմադին նաեւ դատական համակարգի բարձրաստիճան պաշտոնյաներից է, եւ այաթոլլահ **Մահմուդ Հաշեմի Շահրուդիի**՝ դատական իշխանության նախագահի պաշտոնը զբաղեցրած տարիներին ղեկավարել է երկրի գլխավոր տեսչական կազմակերպությունը: Նա զբաղեցրել է նաեւ տեղեկատվության նախարարության արտաքին հետախուզության պետի եւ նույն գերատեսչության փոխնախարարի պաշտոնները:

**Մոհամմադ Մեհդի Էսմայելի**

Էսմայիլին նախագահ Էբրահիմ Ռայիսիի գլխավորած կառավարությունում զբաղեցնում էր մշակույթի եւ իսլամական առաջնորդության նախարարի պաշտոնը: Միջազգային իրավունքի եւ իրավագիտության մասնագետ է: Էբրահիմ Ռաիսիի նախընտրական շտաբի ամենաակտիվ անդամներից էր: Նախարարի պաշտոնից բացի, նա դասավանդում է նաեւ Թեհրանի համալսարանի իրավագիտության եւ քաղաքագիտության ֆակուլտետում: Նախագահ Ահմադինեժադի երկրորդ կառավարությունում եղել է Սպահանի նահանգապետը:



Մոհամմադ Մեհդի Էսմայելին վերջին մի քանի ամիսների ընթացքում աչքի է ընկել իսլամական հեղափոխությունից հետո երկիրը լքած իրանցի արվեստագետների հայրենադարձությունը խրախուսելու վերաբերյալ հայտարարություններով:

**Էլիաս Նադերան**

Նադերանը Իսլամական Հեղափոխության Պահապանների Կորպուսի՝ ԻՀՊԿ նախկին հրամանատարներից է: Ներկայումս մեջլիսի պատգամավոր է: Թեեւ նա «արմատական ֆունդամենտալիստների» քաղաքական հոսանքին է պատկանում, սակայն Ահմադինեժադի նախագահության օրոք հաճախ է հանդես եկել ընդդիմադիր դիրքերից: Նա Մեջլիսում կասկածի տակ է դրել Ահմադինեժադի նախագահության երկրորդ շրջանում առաջին փոխնախագահի պաշտոնն զբաղեցրած **Մոհամմադ Ռեզա Ռահիմիի** կրթական որակավորումը:

**Տիկ. Զոհրե Էլահիան**

Զոհրե Էլահիանը նախագահական ընտրություններին գրանցված սակավաթիվ կանանցից է: Եթե Պահապան խորհուրդը «քաղաքական այր» եզրույթը շարունակի մեկնաբանել որպես արական սեռին պատկանող «քաղաքական գործիչ, ինչպես իբրեւ պարտադիր պայման նշված է Սահմանադրության մեջ, ապա տիկին Էլահիանը մյուս կանանց նման կզրկվի այդ համապետական միջոցառմանը մասնակցելու հնարավորությունից: Տիկ. Էլահիանը ներկայումս, որպես բաժանմունքի վարիչ, աշխատում է Բժշկական գիտությունների ակադեմիայում: Թեհրանի ընտրատարածքից երկու անգամ ընտրվել է որպես Մեջլիսի պատգամավոր:

**Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆ**

Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը 14-րդ նախագահական ընտրություններում գրանցված ամենահայտնի դեմքերից է: Ռոհանիի նախագահության տարիներին նա չորս տարի եղել է Մեջլիսի խոսնակ: Որպես խորհրդարանի խոսնակ իր աշխատանքային գործունեության առաջին տարում հակադրվել է գործող նախագահ **Ռոհանիի** կառավարության քաղաքականությանը, եւ միայն հաջորդ երեք տարիներին է համագործակցել գործադիր իշխանության հետ: Ընդամենը մի քանի օր առաջ է Ղալիբաֆը վերընտրվել որպես Մեջլիսի խոսնակ, սակայն, ըստ ամենայնի, նա գերադասում է նախագահի պաշտոնում շարունակել իր ծառայությունները:

Թեհրանի նախկին քաղաքապետ Ղալիբաֆը նախագահական ընտրությունների թեկնածու է եղել նաեւ 2005, 2013 եւ 2017 թվականներին, սակայն առաջին երկու անգամ բավարար ձայներ չի հավաքել, իսկ երրորդ անգամ հօգուտ Սեյեդ Էբրահիմ Ռայիսիի ինքնաբացարկ է ներկայացրել:

**Ալի Նիքզադ**

Ժամանակին Ահմադինեժադի մերձավորներից է եղել: Սակայն ներկայումս նրանց քաղաքական հայացքները չեն համընկնում: Մեջլիսի երկրորդ փոխխոսնակն է: Նա նաեւ Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանում Արդեբիլի նահանգապետի պաշտոնն է զբաղեցրել: Ղեկավարել է նաեւ կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը: Եղել է տրանսպորտի ու ճանապարհների նախարարի պաշտոնակատարը:

**Մահմուդ Ահմադինեժադ**

Վերջին երկու տասնամյակների ընթացքում Մահմուդ Ահմադինեժադը եղել է Իրանի ամենասկանդալային քաղաքական գործիչներից մեկը: Թեեւ նախագահական ընտրությունների այս շրջանում նրա թեկնածությունը լիովին կանխատեսելի էր, բայց Պահապանների խորհրդի կողմից նրա որակազրկումը նույնպես բացառել չի կարելի: 9-րդ եւ 10-րդ կառավարությունների ղեկավարը, որը համարվում է իրանական քաղաքականության «Գարուն» շարժման հիմնադիրը, ժամանակին ունեցել է «արմատականների» լիարժեք աջակցությունը: Սակայն վերջին տասը տարում նա զրկվել է այդ աջակցությունից:

Վերջերս տարածված մի տեսանյութում պատկերված են Ահմադինեժադի համախոհները, որոնք վերջինիս խնդրում են մասնակցել նախագահական ընտրություններին, ինչին դրականորեն է արձագանքում նախկին նախագահը:

**Ալի Լարիջանի**

Ժամանակին Ալի Լարիջանին «արմատականների» քաղաքական հոսանքի ամենակարկառուն դեմքերից էր, սակայն աստիճանաբար նա սկսեց համագործակցել Հասան Ռոհանիի հետ՝ գործնականում դառնալով Ռոհանիի ներկայացրած «չափավորականների» շարժման ազդեցիկ դեմքերից մեկը: Այժմ, երբ Ռոհանին «Բանիմացների խորհրդի» ընտրություններին մասնակցելու հնարավորությունից զրկվելու պատճառով ցուցադրաբար հրաժարվել է մասնակցության հայտ ներկայացնել նախագահական ընտրություններին, շատերը Լարիջանիին պատկերացնում են երկրի նախագահի պաշտոնում Ռոհանիի քաղաքական գիծը շարունակողի դերում:

Սահմանադրության Պահապանների խորհրդի «դատին» են սպասում կրոնապետական կարգերով կառավարվող Իրանի պատմության ընթացքում հանգուցային պաշտոններ զբաղեցրած նաեւ այլ անձինք: Այդ թվին են պատկանում նախկին նախագահ Ռոհանիի առաջին տեղակալ, «բարեփոխական» գործչի համբավ ունեցող **Էսհաղ Ջահանգիրին**, նույն հոսանքի ներկայացուցիչ, նախկին նախագահ **Խաթամիի** կառավարությունում առողջապահության նախարարի պաշտոնն զբաղեցրած **Մասուդ Փեզեշքիանը**, նախագահ Ռոհանիի կառավարությունում տրանսպորտի ու քաղաքաշինության նախարարությունը ղեկավարած **Աբբաս Ախունդին** եւ այլք:

Հավելենք նաեւ, որ Պահապանների խորհրդի կողմից այս համապետական միջոցառմանը մասնակցելու հայտ ներկայացրած գործիչներից ամենատարեցը 1949 թվականին ծնված **Ալի Սուֆին** է, իսկ ամենաերիտասարդ հավակնորդները՝ 1980 թ. ծնված պարոն **Մեհրդադ Բազրփաշն** ու նախկին պատգամավոր տիկ. **Համիդե Զարաբադին** են: Գրանցման ժամանակ, վերջինս ներկայացել է ավելի ազատ կանացի հանդերձանքով:

Կանանցից չորս հոգի են կարողացել գրանցվել Իրանի ներքին գործերի նախարարության ընտրությունների ընթացքն ապահովող շտաբի ցուցակում:

# Կյանքը քաղաքագիտական դասագրքերից դուրս

⇨1 Նույնիսկ Տավուշի անունով շարժում սկսած մարդիկ կոչ չեն անում՝ գնալ եւ օգնել տավուշցիներին, նրանց կոչն այլ բովանդակություն ունի՝ Փաշինյանի հրաժարական ու հանրահավաքի ներկայանալու հրավեր այդ օրակարգով։

Ոչինչ չի փոխվել մեր շուրջն աշխարհաքաղաքական առումով, առաջվա նման Հայաստանը որպես ազդեցությունների ամրապնդման դաշտ են տեսնում տարածաշրջանի գլխավոր խաղացողները եւ քաշքշում են Հայաստանը՝ մեր հանդեպ գործածելով մահակի եւ քաղցրաբլիթի քաղաքականությունը, Ադրբեջանն առաջվա նման տողատակերով եւ ափաշկարա աչք է տնկել մեր ունեցվածքին, «Տավուշն հանուն սահմանազատման» շարժման ոգեշունչ կոչերով երեւանյան հանրահավաքներին զուգահեռ՝ ավարտին է հասցվում Տավուշում սահմանազատումը։ Անհասկանալի է, թե ո՞ր քարտեզներով պետք է արվի սահմանազատման հաջորդ փուլը, քանի որ ոչ ոք չի պնդում, թե ողջ սահմանազատումն է իրականացվելու 1976 թվականի քարտեզներով։ Հանրահավաքներն ավելի ու ավելի են կտրվում իրականությունից։ Ընդհանրապես՝ Հայաստանում երկու իրականություն է, երկուսն էլ հեռու բուն իրողություններից՝ իշխանության մեջ կարծում են, որ իրենց դիրքերն առավել քան անսասան են եւ շարժումը մարել է, իսկ Բագրատ Սրբազանի նախաձեռնած շարժման երեւացող եւ չերեւացող շերտերում համոզված են, որ իշխանությունը գնալու է, անգամ մոտավոր ճանապարհային քարտեզ ունեն՝ անցումային կառավարություն, արտահերթ ընտրություններ եւ այլն։ Իսկ հանրության լայն շերտերը բացարձակ այլ ժամային գոտում են՝ իրենց հոգսին տրված։

Ազգային ժողովում վարչապետ **Փաշինյանին** երբ հարցրի, թե ներքաղաքական ճգնաժամի տարրեր չի՞ տեսնում երկրում կատարվողի մեջ, ու եթե տեսնում է՝ ապա որպես քաղաքական ուժի ղեկավար ինչպե՞ս է պատկերացնում լուծումը։ Փաշինյանը լուծման մասին խոսելու փոխարեն (մենք հուշում էինք դրել հարցի մեջ՝ դրսի ընդդիմադիրների հետ հանդիպել-քննարկել)՝ ինձ խորհուրդ տվեց նայել քաղաքագիտության դասագրքերը, քանի որ քաղաքագիտական կանոններով Հայաստանում քաղաքական ճգնաժամ չկա։ Ես, իհարկե, վաղուց եմ ուսումնասիրել քաղաքագիտական գրականությունը, ի տարբերություն իբր քաղաքական վերլուծություններ անող շատերի, բայց որպես արձագանք նշեմ, որ Հայաստանի քաղաքական կյանքը ոչ մի քաղաքական կանոնի չի ենթարկվում, բացի քառանդամ բաժնետիրական ընկերության ներքին կանոնակարգից, որ գործում է մի քանի տասնամյակ եւ հիմա էլ՝ հասարակության գլխին կոտրելով քաղաքական քարտեզներ, բաժնետերերի կողմից գծված խորհրդարաններ եւ իշխանություններ։ Չնայած ընտրությունների եւ այլ ֆորմալ ինստիտուտների։ Միեւնույն ժամանակ այսպիսի փոքր հանրույթում դժգոհների մեծ բանակը չնկատելը, նրանց հանդեպ ուժային մեթոդներով աշխատելը չեմ կարծում, որ քաղաքագիտության հետ կապ ունի եւ ողջամիտ է որեւէ կառավարության համար։

Ուրիշ բան, որ առաջին հայացքից լայն հանրությանն անհասկանալի են նաեւ ներկա կառավարումից դժգոհներին գեներացնող «Տավուշն ընդդեմ սահմանազատման» շարժման բուն նպատակներն ու դրանք հետագայում իրագործողների անունները թաքցնելը։ Մարդկանց գործից կտրել, նրանց ուշադրությունը բեւեռել փողոցային երթերի եւ անվերջ, թող որ նաեւ արժեքաբանական հարցեր շոշափող, խոսքուզրույցի վրա, լուրջ չէ, էլ չասած, որ մարդկանց զբաղեցնելը բերում է երկրին ներկայացվող բազմաթիվ վտանգներն ու խնդիրներն այս պահին չնկատելուն։ Եւ ժանրի կանոններով էլ իշխանափոխության գեներացման երկարող, տեւական-սերիալային ժամավաճառությունն ուղիղ համեմատական է շարժման նպատակների իրականացման հավանականության աստիճանական փոքրացմանը։ Եթե, իհարկե, բուն նպատակը մինչեւ հերթական ընտրություններ իրենց նոր ընդդիմադիր խմբերի ստեղծմանը խոչընդոտելը չէ՝ առկա բաժնետիրական քաղաքական ստատուս-քվոն պահպանելու, դրա այս կամ այն թեւն ուժեղացնելու ջանքով։

Անուններ չասելու, տեւական պայքարի հրավիրելու, «Հայրենիք եւ պատիվ» կապակցությունը բավական հաճախ կրկնելու (ակամա զուգորդումները նկատեցի՞ք), շարժման տեւական լինելու մասին թերասացությունները հասարակության մեջ բազմաթիվ ենթադրությունների տեղիք են տալիս, շարժման հետեւում կանգնածների անձերի, շրջանակների, անգամ երկրների վերաբերյալ, ոմանց վանելով հրապարակից, եւ այդ անորոշությունը, վախը՝ իշխանությունը սկուտեղով հետագայում հասարակությունից մերժված անձանց մատուցելուց, անգամ Սրբազանի խարիզմատիկ անձը չի կարող ի չիք դարձնել։

Տողերիս հեղինակի համար թեեւ մեծ գաղտնիքներ չկան, բայց հանրությունն ինքը սիրում է հեքիաթների հավատալ, չնայած վերջին տարիների փորձառությունն ու դժբախտությունները մարդկանց զգուշավոր են դարձրել։ Եթե հավելենք, որ մամուլում արտահոսքեր կային, թե շարժումից մի փոքր առաջ Էջմիածնում հանդիպել են նախկին նախագահներն ու քննարկել ներկա վիճակը, ու հավանաբար ինչ-որ որոշումներ կայացրել,ապա մարդիկ այդպիսի արտահոսքերից ավելի հոռետես են դառնում։

Բայց մեր հիմնական վերլուծությունն այս առումով էլի կհետաձգենք՝չվստահելու համար խանգարողի պիտակը, որ սովորաբար կպցվում է անաչառ հայացքի տեր մարդկանց, համբերություն ունենք սպասելու Սրբազանի հրավիրած գլխավոր հանրահավաքին հունիսի 9-ին, համոզվելու համար հայաստանյան քաղաքական իրողությունների վերաբերյալ մեր փորձառության իրավացիությանը։

Իսկ մեր քաղաքական փորձառությունը հոռետեսական է եւ տեսնում է, որ ընդամենը սովորական ընտրական սխեմա է նախապատրաստվում՝ 2026 թվի ընտրությունների ժամանակ իշխանությունը կիսելու նույն, կամ համարյա թե նույն քվոտաներով եւ նույն բաժնետերերով,մի քիչ ավել-պակաս, ինչ անցյալում եւ հիմա է (մտքներովդ անգամ չանցնի, որ տնտեսական լծակների տերերն իշխանություն չունեն, վկա՝ բարենպաստ դատավճիռները), ըստ դրանց ապագա խորհրդարանի սխեման այնպես գծելու, որ մարդկանց թվա, թե իրենք են ընտրության գնացել եւ իշխանություն ընտրել։ Խոսքը միայն երեւացող մի քանի ֆիգուրներին, ու նախ Փաշինյանին փոխելու մասին է, որը խորքով մեծ ծրագիրը եւ տնտեսական առկա բաժանումը չի փոխելու, անգամ Հայաստանի արտաքին կողմնորոշումների մեջ դեր չի ունենալու, քանի որ դրանք Հայաստա՛նը չի որոշում։

# Եվրոպահայ ընտրողները հստակ չեն որոշել ո՞ւմ տալ քվեն

Հունիսի 6-ին Նիդեռլանդներում սկսվեց աշխարհում մեծությամբ երկրորդ ժողովրդավարական քվեարկությունը. 350 միլիոն ընտրող պիտի որոշի Եվրոպայի քաղաքական ճակատագիրը, որ վերջին ամիսներին հատկապես աջակողմյան եւ ծայրահեղ աջակողմյանների շեղբին է։ Եվրոխորհրդարանում քվե ստանալու ընտրությունը ԵՄ երկրներում 4 օր շարունակվելով, կավարտվի կիրակի՝ հունիսի 9-ին։ ԵՄ երկրների մեծ մասը, այդ թվում ամենամեծ մասնակցությունն ունեցող Գերմանիան, կքվեարկի կիրակի օրը։ 2024-2029-ի ընտրաշրջանում Եվրոխորհրդարանը նախորդի համեմատ 15- ով կաճի, կկազմի 720 պատգամավոր։ Բնակչությամբ ամենամեծը՝ ԳԴՀ-ն 96 պատգամավորով կներկայանա Ստրասբուրգում եւ Բրյուսելում, Ֆրանսիան՝ 81(+2)։

Տեղի սղության պատճառով անդրադառնանք կարեւորին։

Քանի որ Հայաստանում այս օրերին հատկապես շահարկվում է եկեղեցու, կրոնի գերադաս լինելու «վտանգը», ծանուցենք, որ Նիդեռլանդներում տեղական ընտրության օր է սահմանված չորեքշաբթին, եւ դա ունի կրոնական պատճառ։ Կառավարությունն ուզում է, որ քվե ունեցող հնարավորինս շատ մարդ մասնակցի ընտրությանը, մահմեդականների, հրեաների, քրիստոնյաների մասնակցությունը դյուրին դարձնելու համար բացառել է ուրբաթը, շաբաթը եւ կիրակին, իսկ երկուշաբթին հարմար չէ, քանի որ շաբաթավերջին հաջորդում է։ ԵՄ-ի սահմանած 4 օրերի մեջ Նիդեռլանդներն ընտրել է հինգշաբթին, քանի որ իրենց ավանդական ընտրական չորեքշաբթի օրվան հաջորդող օրն է։

Ուրբաթ, 2 օր շարունակ ընտրության են մասնակցելու Իռլանդիայի եւ Չեխիայի քաղաքացիները, շաբաթ օրը կբացվեն Լիտվայի, Սլովակիայի, Մալթայի, Իտալիայի ընտրատեղամասերը, դարձյալ 2 օր քվեներ ընդունելով։ ԵՄ մյուս երկրներում ԳԴՀ-ի նման ընտրության օր է սահմանվել հունիսի 9-ը։ Ավստրիայի, Մալթայի, Բելգիայի օրինակին հետեւելով՝ առաջին անգամ ԳԴՀ-ում ընտրելու իրավունք է տրված նաեւ 16, 17 տարեկաններին, որոնց մեջ նկատելի շատ են աջերի համակիրները։ Բելգիայում 16 տարեկանների համար ընտրության մասնակցությունը նույնիսկ պարտադիր է։

Ֆրանսիայում եւ Գերմանիայում մեր երկշաբաթյա բանավոր հարցումները վկայում են, թե որեւէ կուսակցություն չի արտահայտում հայ համայնքի համակրանքը։ Մեր զրուցակիցներն առավել հաճախ խոստովանում են, թե հիասթափված են քաղաքական գործիչներից, կուսակցություններից, իսկ ընտրության մասնակցելու կարեւորությունը գիտակցողների մեջ առավել շատ են չկողմնորոշվածները։ «2020-ի պատերազմից հետո պարզ դարձավ, որ Հայաստանին օգնել կարող ենք ոչ այնքան մեր քվեով, որքան տեղում՝ Հայաստանում եվրոպահայերիս կամավորությամբ»։ Սա ֆրանսահայերի, գերմանահայերի ընդհանրացված կարծիքն է։

Այդուհանդերձ կարեւոր է, որ եվրոպաբնակ հայ ընտրողները, խավիարային դիվանագիտության դասը հիշելով, նախապես գոնե իրազեկ դառնան՝ իրենց թեկնածուն Բաքվի եւ Անկարայի երկար ձեռքն է արդյոք, ծայրահեղ աջ «Գորշ գայլերի» հետ համագործակցո՞ւմ է, նպաստո՞ւմ է ցեղասպան **Ալիեւին** հանցակից **Ուրսուլա ֆոն դեր Լայենի** շահերին, սատարո՞ւմ է **Ֆրանկ Շվաբեի** սկսած պայքարին։

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Տրիլիոնների՞ դիմաց՝ Ալիեւի Փաշիզմը

⇨1 Գլոբալ հյուսիսի հարուստ երկրների պահանջներից մեկն այն է, որ Ծոցի երկրներն էլ մաս կազմեն կլիմայի պահպանման համար վճարվող ահռելի գումարներին։ «Ադրբեջանին էլ Ռուսաստանն է վճարում», ինձ փորձեց լուսավորել համաժողովին մասնակից մի բնապահպան նորզելանդացի լրագրող, երբ հասկացավ միտքս, թե քաղաքակիրթ աշխարհը 2020-ից հետո պիտի բոյկոտեր Բաքվում որեւէ բան, մանավանդ բնապահպան համաժողով գումարելու գաղափարը՝ ֆոսֆորով Արցախի անտառներն ու մարդկանց այրելուց հետո... Նրան զարմացրեց, երբ ասացի, թե ՄԱԿ-ին էլ, ՅՈՒՆԵՍԿՕ-ին էլ, Վատիկանին էլ Ալիեւն է վճարում, դրա համար էլ լռում են, բնիկներին՝ հայերին սպանելով, տեղահանելով, նրանց բնական հարստությունները՝ հատկապես լիթիումը վաճառելով էլ Ալիեւը չի հագենում, բանտում է պահում հայ ռազմագերիներին, եւ բնությունն անպատիժ չի թողնելու այս ամենը։

Հունիսի 3-ին ժամը 15-18-ին Բոննի համաժողովից դուրս եկող պատվիրակները, դիտորդներն ու լրագրողները տեսնում, լսում էին գերմանահայերի գերմաներեն, անգլերեն «Ազատություն Բաքվի բանտում անօրեն պահվող հայ ռազմագերիներին», «Ալիեւին՝ Հաագա» վանկարկումները։ Վերջինը երեւի շատ էր դուր եկել ադրբեջանցի պատվիրակներից մեկին, որ համաժողովի դահլիճ էլ չէր ուզում մտնել, ցինիկ ժպիտով հետեւում, լուսանկարում էր հայ ցուցարարներին։

Այսօր՝ հունիսի 7-ին ժամը 14-18-ին նույն վայրում կշարունակվի բողոքի ցույցը՝ UN, stop greenwashing the genocidal and fossil energy azerbaijani dictatorship! «ՄԱԿ, դադարեցրո՛ւ մոլորեցնել, թե ցեղասպան և հանածո էներգիան կիրառող ադրբեջանական դիկտատուրան բնապաշտ է » կոչով։ (Շատերը greenwashing-ը չեն թարգմանում, համապատասխան բառեզր չկա, մենք փոխանցել ենք իմաստը-Ան. Հ.)։ Հուսանք աշխատանքային օրով գերմանահայերի ցույցը բազմամարդ կլինի, իսկ պահանջները՝ բնապահպանների համար նվազագույնը սթափեցնող։




*Հունիսի 3-ին հայ համայնքի բողոքի ցույցը*

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Սեսար Վեաս Վալենսիա. Չիլիից Հայաստան՝ դուդուկի հանդեպ սիրով

*ԵՐԵՎԱՆ - Սերը հայ երաժշտության հանդեպ չիլիացի երաժիշտ **Սեսար Վեաս Վալենսիային** բերել է Երեւան: 33-ամյա Սեսարը 2007-2013 թթ. Սանտյագոյում երաժշտություն, իմպրովիզացիա եւ էլեկտրական կիթառ է ուսանել Խորխե Դիասի հետ: Էլեկտրական կիթառի կատարումներով ելույթներ է ունեցել «Պրոջազ» արհեստավարժ հաստատությունում: Հետագայում նաեւ երաժշտություն եւ ձայնային թերապիա է սովորել Սանտյագոյում՝ «Ռուտա Ալեգրա Օլիստիկ» ուսումնական կենտրոնում: Բացի այդ, հանդես է եկել Սանտյագոյի «Վոքս սելեստե» երգչախմբում: 2017-ին Վեասը հիմնել է «Ունիսոնո տերապիաս» ընկերությունը, որը Չիլի է ներմուծում երաժշտական եւ ձայնային թերապիայի մեջ մասնագիտացած երաժշտական գործիքներ: Նաեւ առաջարկել է ձայնային ու երաժշտական թերապիայի ծառայություններ տարբեր ընկերությունների, դպրոցների, մանկապարտեզների եւ մասնավոր անձանց:*





**-Սեզա՛ր, առաջին անգամ ե՞րբ լսեցիր հայկական երաժշտություն:**

-Ամեն ինչ սկսվեց Գուրջիեւից: Ինձ խորապես հետաքրքրեցին նրա փիլիսոփայությունը, նաեւ նրա երաժշտությունն ու պարերը: Ցանկանալով ավելին իմանալ նրա մասին՝ ես հայտնաբերեցի, որ նա ծնունդով Գյումրիից է, Հայաստանից, ինչը հետաքրքրություն առաջացրեց հայ մշակույթի հանդեպ: Ես մասնակցեցի Գուրջիեւի երաժշտությունը պարունակող «Արեւելյան երգեր» սկավառակի ձայնագրմանը ու թողարկմանը: Հետաքրքրությունս ստիպեց ինձ ուսումնասիրել հայկական երաժշտությունը, հատկապես Կոմիտասին, եւ երբ առաջին անգամ լսեցի դուդուկի հնչյունները՝ անմիջապես գրավվեցի այդ գործիքով: Կապ հաստատեցի Արգենտինայի Կորդոբա քաղաքում ապրող դուդուկահար **Գագիկ Գասպարյանի** հետ, որն ինձ օգնեց դուդուկ գտնել եւ սկսեց դասեր տալ: Մոտ երեք տարի, տարին երկու-երեք անգամ մեկնում էի Գագիկի հետ պարապելու: Այնուհետեւ ցանկություն ունեցա այցելել Հայաստան. հիմա երկրորդ անգամ եմ այստեղ: Իմ առաջին այցը անցյալ տարի էր, վեց ամսով, ինչը հիանալի փորձառություն էր: Առաջին անգամ երբ Երեւան եկա, այստեղ ճանաչում էի միայն մեկ մարդու՝ դուդուկի մի վարպետի, որը գործիքներ էր տրամադրել Սանտյագոյի իմ փոքրիկ խանութի համար: Նա ինձ դիմավորեց օդակայանում եւ օգնեց կացարան գտնել: Ուսուցիչ գտնելն իմ հաջորդ խնդիրն էր: Երեւանի սրճարանում աշխատելիս նկատեցի մի երաժշտի, որով միշտ հիացել եմ՝ իմ սիրելի դուդուկահարներից **Արսեն Պետրոսյանին**: Ես խոսեցի նրա հետ, եւ բախտս բերեց, որ նա համաձայնեց լինել իմ ուսուցիչը: Նա հրաշալի անձնավորություն է: Իմ սիրտը միշտ խորապես հուզել է Կոմիտասի երաժշտությունը: Շարունակում եմ ավելի շատ ուսումնասիրել հայ երաժշտությունը: Վերջերս լսում եմ աշուղ Ջիվանու երգերը, որն այս պահին դարձել է իմ սիրելին: Ինձ հաճելիորեն զարմացրեց Հայաստանի երաժշտական բարձր մակարդակը՝ դասական, ժողովրդական, թե ջազային:

Մեկ այլ հիշարժան փորձառություն էր հանդիպել պարի փառատոնում մի տղայի հետ, որը, պարզվեց, երգում է երգչախմբում: Ես ասացի, որ կուզեմ հանդես գալ երգչախմբում, եւ նա ինձ ծանոթացրեց իր երգչախմբի դիրիժորի հետ: Այդպիսով ես դարձա «Խազեր» երգչախմբի անդամ: Ուստի հիմա դուդուկ նվագելն ու երգչախմբում երգելն իմ հիմնական երաժշտական գործունեությունն է Հայաստանում: Բացի այդ, ես որոշեցի միանալ Հայ կամավորական կորպուսին, որպեսզի ավելի խորասուզվեմ հայկական կյանքի մեջ եւ կապ հաստատեմ տեղացիների հետ: Ներկայումս աշխատում եմ «Ակնա» կազմակերպության հետ՝ Գուրջիեւի անվան համույթի ղեկավար **Լեւոն Էսկենյանի** գլխավորությամբ: Մեր նպատակներից մեկն է կազմակերպել անսամբլի շրջագայություն Լատինական Ամերիկա եւ Իսպանիա: Բացի երաժշտությամբ զբաղվելուց, իսպաներեն եմ դասավանդում Եվրոպական համալսարանում: Ես հաճելիորեն զարմացա՝ հայտնաբերելով, որ շատ հայեր մեծ սեր ունեն իսպանական մշակույթի ու լեզվի հանդեպ. եւս մե՛կ հիանալի փորձառություն Հայաստանում:

**-Իսկ ինչպե՞ս է հայերեն սովորելու ձեր փորձառությունը:**

-(Հայերեն) Շատ դժվար է: Բայց իսկապես հաճույք եմ ստանում հայերեն սովորելուց, ուստի հուսով եմ, որ շարունակելու դեպքում ավելի շատ կխոսեմ: Իրականում մինչեւ գալս ես առցանց դասերի էի հաճախում: Բարեբախտաբար, համալսարանն ինձ հայերենի դասընթացներ է առաջարկում: Հետաքրքրական է, որ երբ փորձում եմ ինչ-որ բան գնել խանութում, մարդիկ հաճախ անցնում են անգլերենի՝ ինձ օգնելու համար: Այնուամենայնիվ, ես նախընտրում եմ խոսել հայերեն, ուստի հայերեն նրանց ասում եմ՝ «Չեմ խոսում անգլերեն»:

**-Երբեւէ հայկական համերգ կազմակերպե՞լ ես Չիլիում:**

-Այո, նախքան Հայաստան գալս հնարավորություն ունեցա հանդես գալ համերգով, որտեղ հնչեց դուդուկի երաժշտություն: Հրաշալի փորձառություն էր, մանավանդ, որ վեց ամիս Հայաստանում մնալուց հետո հատուկ երկացանկ էի պատրաստել: Երկու-երեք շաբաթ պարապեցի երկու չիլիացի երաժիշտների հետ, որոնցից մեկը նվագում էր շվի, մյուսը՝ բլուլ եւ դափ: Մեր համերգին հիմնականում ներկա էր չիլիացի հանդիսատեսը: Բացի այդ, պատիվ եմ ունեցել ելույթ ունենալ Չիլիի հայ համայնքի համար: Հուսով եմ, որ Չիլիում ավելի շատ համերգների միջոցով կշարունակեմ ներկայացնել հայ երաժշտությունը:

**-Սեսա՛ր, ինչպե՞ս կբնութագրես դուդուկի ձայնը:**

- Խորը եւ հոգեւոր, որն ունկնդրին կապում է մի հինավուրց տեղանքի հետ:

**-Իսկ չե՞ս կարծում, որ դուդուկը շատ սովորական մի բան է դառնում Հայաստանի համար:**

-Ճիշտ է, դուդուկն ավելի տարածված է դարձել Հայաստանում, բայց իմ առաջին տպավորությունն այն է, որ շատերն այստեղ շատ բան չգիտեն հայ երաժշտության մասին: Տխուր է, քանի որ կարծում եմ, որ բոլորը պետք է դրա խորը ըմբռնումն ու գնահատումն ունենան: Սակայն նման իրավիճակ միայն Հայաստանում չէ: Այդուհանդերձ, կան բազմաթիվ նվիրյալ անհատներ, որոնք ջանասիրաբար աշխատում են հայ երաժշտությունն ու պարն ուսումնասիրելու եւ սովորելու ուղղությամբ: Ճիշտ է, որ գործիքը հայտնի է դարձել տարբեր երկրներում, մասամբ միջազգային ֆիլմերի շնորհիվ, բայց անձամբ կարծում եմ, որ դուդուկն ավելի մեծ ճանաչման է արժանի ամբողջ աշխարհում: Շատերը սխալմամբ կարծում են, թե այն հեշտ է նվագել: Իրականում դուդուկին տիրապետելը ուսուցչի հետ լուրջ վերապատրաստում է պահանջում: Ցավոք սրտի, այստեղ ոմանք չեն հասկանում, որ ինչ-որ մեկը կգա Հայաստան հատուկ դուդուկ նվագել սովորելու համար:

**-Զարմանալի չէ, մի քանի տարի առաջ այստեղ էր մեքսիկացի Լուիս Արգյուելեսը, որը սովորեց դուդուկ նվագել եւ այժմ Մեքսիկայում գովազդում է մեր այդ գործիքը: Եվ ոչ միայն նա... Է՞լ ինչ ես սիրում Հայաստանում:**

-Ինձ ամեն ինչ դուր է գալիս: Ես շատ եմ սիրում հայկական պարերը: Եվ մարդի՛կ: Նրանք շատ բարի են ու ջերմ, շատ բաց ու զգացմունքային: Ես ինձ հարմարավետ եմ զգում նրանց հետ: Հայաստանի, մասնավորապես Գորիսի, Ջերմուկի եւ Լոռու շրջակայքի բնական գեղեցկությունը գրավում է ինձ: Երեւանն իր բազմաթիվ տեսարժան վայրերով իսկապես գեղեցիկ քաղաք է: Եվ չմոռանանք անզուգական խոհանոցը, հայկական սուրճը, ամենահամեղ մրգերն ու բանջարեղենը, որ ես փորձել եմ այստեղ...

**-Հայաստանի հետ կապված ի՞նչ երազանքներ ունես:**

-Ապագա ուղիս անորոշ է: Ես տատանվում եմ Հայաստանում մնալու եւ Չիլի վերադառնալու միջեւ: Սակայն կարճաժամկետ հեռանկարում իմ երազանքն է կապեր հաստատել Հայաստանի եւ այլ ազգերի միջեւ՝ սկսած իմ հայրենիքից: Ես ձգտում եմ Չիլիում կազմակերպել հայկական մշակութային նախագծեր եւ համագործակցել հայ երաժիշտների հետ միջազգային մշակութային փոխանակումների համար: Հաղորդելով Հայաստանի հարուստ մշակութային ժառանգությունը աշխարհին՝ ես հույս ունեմ բարձրացնել իրազեկվածությունը եւ գնահատել այդ ժառանգության բազմազան ավանդույթները, որոնք համեմատաբար անհայտ են մնում աշխարհում:

**-Այժմ Հայաստանում իրավիճակը կայուն չէ...**

-Իրոք, իրավիճակը Հայաստանում կարող է մարտահրավեր լինել, եւ ես դրա ականատեսը եղա անցյալ սեպտեմբերին իմ այցելության ժամանակ: Սակայն միայն քաղաքական մթնոլորտը բավարար չէ այս պահին ինձ ստիպելու հեռանալ Հայաստանից: Կարծում եմ, որ այստեղ մնալը թույլ է տալիս իրականացնել իմ նպատակի մի մասը՝ աջակից լինել դժվար պահերին: Այստեղ ես կարող եմ ավելի արդյունավետ նպաստել Հայաստանին, քան կարող էի անել դա իմ երկրում:

**-Շատ հուզիչ է նման խոսքեր լսել ոչ հայից: Շնորհակալություն այս զրույցի համար, Սեսա՛ր:**

## «ԱԶԳապատում»



Մի անգամ **Կայենը** դիպվածաբար սպանել է եղբորը՝ **Աբելին**: Բայց այլեւս Աբելին սպանել հնարավոր չէ: Բնության օրենքն է այդպիսին:

Տարիներ անց, կամ միգուցե դարեր ու հազարամյակներ հետո, Գալիլայի կառավարիչ **Հերովդեսի** խորթ դուստր **Սաղոմեի** նյութած դավադրությամբ ընդամենը մի անգամ գլխատվել է **Հովհաննես Մկրտիչը**: Բայց հետայսու ո՛չ Սաղոմեի, ո՛չ էլ մեկ ուրիշի դավերով Հովհաննես Մկրտիչը չի կարող գլխատվել, բացառվում է:

Հետագայում՝ տակավին արգանդի մեջ Տիրոջ օրհնանքն ստացած **Երեմիա** մարգարեն մի անգամ մեղանչել է ու սպանել բաբելոնյան փոխարքա **Հեդալիոսին**, ու վերջ: Այլեւս փոխարքային ոչ մի վտանգ, ոչ մի մահ չի կարող սպառնալ: Հեդալիոսը վերջնականապես է սպանված:

Մի անգամ էլ, Հայաստանում Քրիստոնեության ընդունումից 268 տարի առաջ, մարդկության գործած մեղքերի համար խաչվել է **Հիսուս** Նազովրեցին: Բայց այլեւս մեր Փրկչին խաչել հնարավոր չէ: Քանզի Նա վճարել է մեր մեղքերի գինն ու հաղթել մահվանը:

Պատմիչները նաեւ վկայում են, որ **Պապ թագավորը** Քրիստոսի խաչելիությունից 320 տարի անց, դեռ չծնված՝ անձնատուր է եղել դեւերին, հետեւաբար տղայությունից ի վեր լի էր դեւերով, որի համար էլ գահակալը միշտ չարքերի կամքն էր կատարում եւ չէր կամենում բժշկվել, եւ հենց դա էր պատճառը, որ գահ բարձրանալով՝ սպանեց Հայոց աշխարհի **Ներսես Հայրապետին**: Բայց այլեւս Պապը չի կարող սպանել Հայրապետին, քանզի Հայաստան Աշխարհի վարած անկախ քաղաքականության պատճառով մեկ անգամ արդեն Պապ թագավորն սպանվել է հռոմեական կայազորի հրամանատար **Տրայանոսի** հրահանգով:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Պոետ, որ այն աշխարհից էլ իրավունք ունի բարբառելու...

## Վառլեն Ալեքսանյան



*Հայաստանի ազգային գրադարանում կայացավ բանաստեղծ, հրապարակախոս, թարգմանիչ եւ խմբագիր Վառլեն Ալեքսանյանին նվիրված հուշ-ցերեկույթ, որի ընթացքում ներկայացվեց նրա նոր՝ «Վերադարձ» ժողովածուն: Հետմահու հրատարակված գիրքը լույս է տեսել բանաստեղծի դստեր՝ Լիլիթ Ալեքսանյանի ջանքերով: Ելույթ ունեցան Ազգային գրադարանի տնօրենի խորհրդական Ներսես Հայրապետյանը, ՀԳՄ նախագահ Էդ. Միլիտոնյանը, ժողովածուի խմբագիր, Վառլենի վաղեմի գրչակից Դավիթ Մկր Սարգսյանը, արձակագիր Վրեժ Սարուխանյանը, բանաստեղծներ Շանթ Մկրտչյանը, Նորայր Գրիգորյանը, Հակոբ Հարությունը: Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանի խոսքը կարդաց խմբագրության գրականության եւ լեզվի բաժնի գլխավոր խմբագիր Էսթեր Խանիկյանը:*

Վառլեն Ալեքսանյան բանաստեղծի անունը ծանոթ է հայ ընթերցողին իր ակտիվ ստեղծագործական կյանքի ընթացքում տպագրված 9 ժողովածուից, հրապարակախոսական հոդվածներից, արձակի նմուշներից: Սակայն, բանաստեղծ լինելուց զատ, նա պատմաբան էր (ավարտել էր Երեւանի պետ. համալսարանի պատմության ֆակուլտետը), եղել էր հանրագիտարանի հնագիտության, ազգագրության, կրոնի ու դիցաբանության ճյուղերի գծով խմբագիրը, ղեկավարել կամ մաս էր կազմել տարբեր խմբագրակազմերի, այդ թվում՝ Թեքեյան մշակութային միության «Պայքար» ամսագրի: Իրեն նվիրված հուշ-ցերեկույթին ներկաները խոսեցին ոչ միայն գրական եւ մշակութային մրցանակակրի մասին (իսկ Վառլեն Ալեքսանյանը ՀԳՄ Ստ. Զորյանի անվ., Թեքեյան մշակութային միության մրցանակակիր էր, ուներ նաեւ այլ բարձր պարգեւներ ու մեդալներ), այլեւ անհատի, քաղաքացու, ուսուցչի, ընկերոջ... Ոչ այնքան պաշտոնական միջոցառում էր, որքան մտերմիկ զրույց մի մարդու մասին, որ համեստ էր՝ չնայած պատմության եւ գրականության իր խորագիտությանը, բարի էր ու կամեցող՝ չնայած փորձություններով լի կյանքին, հոգատար էր մեծի ու փոքրի հանդեպ, բռնկուն էր, քանի որ սասունցու արյուն ուներ, բայց եւ անհիշաչար էր ու նվիրված իր ընկերներին...

«Բանաստեղծությունների ընտրանին անվանել ենք «Վերադարձ»՝ ըստ հեղինակի համանուն վերնագրով բանաստեղծության, որում նա խոսում է մարդու՝ դեպի բնությունը վերադառնալու թաքնված, հաճախ այդպես էլ երբեւէ չգիտակցված ներքին ցանկության, անհրաժեշտության մասին»,- ներկայացրեց Լիլիթ Ալեքսանյանը: «Նրա գրականությունը խոսք ու զրույց է ընթերցողի հետ,- վկայեց Դավիթ Սարգսյանը,- հոգեվիճակ թե մտավիճակ, բայց ծնված դժվարին երկունքով, սրտաքուխ, բայց հառաչանք, ընդվզում, բայց ցավ, ասելիքը՝ գեղագիտական հայտնություն, ինչպես գիտնականի գյուտը՝ տարիների փորձառությամբ եւ տառապանքով կյանքի կոչված... Նա իր ինքնությունը պահպանեց կյանքում եւ տուրք չտվեց գրական թայֆայաբազություններին: Գուցե տուժեց գրախոսականների կամ ծնծղաների առումով, բայց շահեց իր անկաշառությամբ՝ անշահախնդիր եւ անհավակնոտ կերպարը պահպանելով»:

Վ. Ալեքսանյանի՝ գրականությանը նվիրվածությունը հայրենիքին նվիրումից անանջատ էր. ստեղծագործական առաջին շրջանի քնարական երգերին հետագայում պիտի հաջորդեին խոհական տողերը՝ հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ: Նա պեղել էր պատմությունն ու ժամանակը, հասել իր կյանքի այն շրջանին, երբ՝

*«Հիմա, երբ ես շատ ավելին գիտեմ,*
*քան բոլոր քմերը,*
*մոգերն ու շամանները,*
*բոլոր մարգարեներն ու առաքյալները միասին վերցրած,*
*այս ո՞ւմ մասներն են դարձյալ*
*կեղծիքն ինձ մեկնում որպես կերակրի աղ,*
*որպես հաղորդության պատարագի նշխար...»:*

Կյանքն ու մարդուն քննած մտավորականը հաճախ էր խոսում ցավից, կորուսված պատրանքներից: Ինչպես մի առիթով գրականագետ **Պետրոս Դեմիրճյանն** է բնորոշել, «կյանքի խաբարվածությունը թույլ չէր տալիս հասնելու ներդաշնակության... Լարում կա նրա պոեզիայում, ներքին անբավարարվածության զգացում...»:

*«...Պատրանքի գինին անուժ է, անշունչ,*
*հիմա, երբ նորից իմ բալասանող ձեռքը*
*դնում եմ ցավի տնքացող ակունքի վրա,*
*գիտեմ, որ արդեն ոչ ամբողջովին,*
*այլ միայն մասամբ*
*ես հայցողներին հույս կներարկեմ,*
*իսկ մեռյալների հարության համար*
*ուժս այսուհետ անբավ կլինի...»:*

«Տիրոջ խոստովանությամբ» արդյոք ի՞նչը չէր խոսում իր պատրանքների աշխարհի անկման, եւ այդուհանդերձ, իր ուժերի ներածին չափով «հայցողներին հույս ներարկելու» իր ձգտման ու կարողության մասին: Սիրուց բացի բանաստեղծը սթափ միտք ուներ, սեփական հայեցակետեր. նա խոսում էր այս կյանքում խղճմտանքի բաժինն ավելացնելու մասին...

*«...Իսկ միայն սերը չափազանց քիչ է փրկելու համար,*
*ու քանի դեռ իմ միտքը սթափ է,*
*կփորձեմ հուշել փրկության ելքը՝*
*հարկ է սիրո մեջ մի քիչ գութ խառնել*
*ու մի քիչ արցունք,*
*մի քիչ խղճմտանք,*
*մի քանի ճիշտ բառ*
*ու մաքուր ծիծաղ,*
*այլապես ես էլ անզոր կլինեմ*
*քեզ համար այնտեղ՝ վերին ատյանում բարեխոսելու...»:*

«Պոետներն իրավունք ունեն այն աշխարհից էլ բարբառելու...»,- Վառլեն Ալեքսանյանի խոսքն է: Բանաստեղծի մահից ինը տարի անց այս միտքը ստանում է այլ ուժ ու հնչողություն, ա՛յլ հզոր իմաստ: Ժամանակի ջրերը մաքրում, ուրի՜շ փայլ են տալիս բանաստեղծական խոսքի «ոսկե երակին». մարգարեանում էր պոետը՝ այն աշխարհից էլ իր խոսքը նոր ուժով մարդկանց հասցնելու իր կարողության մասին:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Օթեւան» Մայրա Ռոբերտսի կտավի համար

Արշալույս (Ավրորա) Մարտիկանյանի ցավալի անցյալն ու հերոսական հառնումը շարունակում են իրենց հաղթական երթը Մ. Նահանգներում: Բոստոնից «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր **Ալին Գրիգորյանը** հետաքրքրական պատմությամբ մի նոր կտավի մասին է գրում, որտեղ արվեստի եւ անցյալի դառն իրադարձությունները միահյուսվում են՝ դառնալով հիշարժան մի գեղեցիկ ստեղծագործություն, որը դեռ շատերին կմղի բացահայտելու մեր անցյալը:

Մ. Նահանգների հարավարեւելյան մասում ստեղծագործող արվեստագետ **Մայրա Ռոբերտսը**, որին պատվիրված է եղել Հայոց ցեղասպանությունը պատկերող մի կտավ պատրաստել ի հիշատակ Ավագյան ընտանիքի նախնիների, վրձնել է «Երբեք չմոռանանք» խորագրով մոտ 100 սմ X 75 սմ չափսերով մի կտավ, որն այժմ գնահատվում է 20.000 դոլար:

**Լորա** եւ **Սթիվ Ավագյանները**, ինչպես պարզվում է **Լորայի** հետ հարցազրույցից, ներկայիս ապրում են Մասաչուսեթսում: Լորան երկար տարիներ աշխատել է տեղի Տեխնոլոգիական ինստիտուտում: Հանգստյան է կոչվել 2006-ին: Սթիվը ծնվել է 1945-ին Նյու Յորքում՝ վերապրողների ընտանիքում: Հայրը՝ Երվանդը, 9 տարեկանում մոր եւ ընտանիքի մյուս զավակների հետ անցել է Տերզորյան անապատային ճանապարհը եւ հասել Լիբանան: Մոտ 15 տարի անց փոխադրվել է Մ. Նահանգներ եւ հաստատվել Նյու Յորքում, որտեղ էլ հանդիպել է իր ապագա կնոջը՝ Ագաբիին: Վերջինս Ամերիկա էր գաղթել Խարբերդում իր քրոջ հետ մի քանի տարի որբանոցում ապաստան գտնելուց հետո: Ընտանիքի պատմության մասին «Եփրատի դուստրերը» (Daughters of the Euphrates) վերնագրով գիրք է գրել մորաքույրը՝ **Էլիզաբեթ Կարամեն Պեյնը**: 1939-ին «Հարպեր» հրատարակչատան կողմից լույս տեսած հատորում հեղինակը նկարագրել է Հաբուսի գյուղաքաղաքում ընտանիքի կյանքը Ցեղասպանությունից առաջ եւ հետո, ինչպես նաեւ որբ քույրերի որբանոցային առօրյայի մանրամասնությունները:



Սթիվ Ավագյանը Մ. Նահանգներում եղել է Ջոն Գլենի անձնական օգնական 1980 թվի նրա սենատորական մրցարշավի ժամանակահատվածում, եւ վերջինիս հետ Վաշինգտոն է գնացել որպես նրա մամուլի քարտուղարը: Իսկ 1985-ին Օհայո է մեկնել կազմակերպելու սենատորի վերընտրության մրցարշավը, որը հաջող ավարտ է ունեցել 88 օկրուգներում: Ընտրություններից հետո Ավագյանը բացել է իր սեփական խորհրդատվական գրասենյակը, որը գործել է 31 տարի:

Լորա եւ Սթիվ Ավագյանները երբ 2018-ին պատվիրել են կտավը, ժամանակավորապես ապրելիս են եղել Սանիբելում (Ֆլորիդա), որտեղ էլ նրանց դիմել են հովանավորելու Մայրա Ռոբերտսի հայտնի կանանց դիմանկարների ցուցահանդեսը, որին տրվել է «Ձեռնհաս կանայք» անվանումը: Շարքում ընդգրկված են եղել Ռութ Բեյդր Գինզբուրգի (իրավաբան, Մ. Նահանգների գերագույն դատարանի դատավորի օգնական,) Միշել Օբամայի (նախագահ Բարաք Օբամայի կինը) եւ Գրետա Թունբերգի (երիտասարդ աղջիկ, կլիմայական փոփոխությունների դեմն առնելու ակտիվիստ, բնապահպան) (*) դիմանկարները: Ռոբերտսի հետ կապ հաստատելու ժամանակ Ավագյանները խոսել են Հայոց ցեղասպանության մասին եւ խնդրել, որ նկարչուհին Սթիվի նախնիների հիշատակը պատկերող մի կտավ պատրաստի: Ռոբերտսը հետաքրքրվելով խորացել է մանրամասնությունների մեջ եւ արդյունքում կանգ առել նկարի առաջամասում Ավրորա Մարտիկանյանի դիմանկարը ստեղծելու վրա՝ հետնամասում պատկերելով Սթիվի նախնիների Տերզորյան գաղթը:

«Մինչ այդ մենք ոչինչ չգիտեինք Ավրորայի մասին: Դա միաժամանակ ե՛ւ ուսանելի, ե՛ւ ոգեշնչող կտավ էր», պատմել է Լորան հարցազրույցի ժամանակ, ավելացնելով, որ գերդաստանի անդամների հետզհետե նվազող թվի հետեւանքում որոշել են այդ եզակի դիմանկարը նվիրել հայկական մի ինչ-որ պատկառելի կազմակերպության կամ հաստատության:

Այն մշակութային կառույցներին կամ ուսումնական հաստատություններին, որոնք պատրաստ են պատշաճ տարածք տրամադրել եւ համապատասխան թեմաներով քննարկումներ կազմակերպել խորհուրդ է տրվում մինչեւ հունիսի վերջը Լորա Ավագյանին ուղարկել դիմում՝ հետեւյալ հասցեով. «avakianpainting@gmail.com»:

Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

**) Բոլոր 3 անձնավորությունների վերաբերյալ տեղեկությունը **Հ.Ծ.**-ինն են:*

# Պրոֆ. ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «Հայաստան պետությունը լինելու է միշտ»

*...Կյանքում մեզ կերտում են մեր ուսուցիչները՝ բացելով մեզ համար այն աշխարհը, որ Պատմություն ու Ազգային ժառանգություն է կոչվում: Այդպիսի մարդկանցից մեկն ինձ համար եղել է ու կա* ***պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, բազում սերունդների ուսուցիչ Սուրեն Սարգսյանը:*** *Ճշմարիտ հայագիտության ու պատմագրության կրողներից, ում աշխատությունները նոր խոսք են հայագիտության անդաստանում:*

Արդեն հրատարակված են նրա 14 ծավալուն մենագրությունները, երեքն էլ՝ պատրաստ են տպագրության: Հեղինակ է նաեւ 200 գիտական եւ 1000-ից ավելի գիտավերլուծական, հրապարակախոսական հոդվածների, որոնք կարելի է ընթերցել «***Ազգ***»*-ի եւ Սփյուռքի մամուլի էջերում: Դրանցում քննարկվում են Հայոց պատմության բազում հիմնահարցեր եւ այսօրվա մարտահրավերների ու աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում՝ նախանշում մեր անցնելիք ուղին: Միջազգային հեղինակավոր հանդեսներում էլ հիմնարար հոդվածներով արժանի հակահարված է հասցնում հայոց պատմության դեմ ոտնձգության: Սուրեն Սարգսյանի հեղինակած հոդվածները լույս են տեսել ՀՀ-ում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում եւ այլուր:*

Ծնվել է 1954 թվականի հունիսի 10-ին՝ Մարտունու շրջանի Զոլաքար գյուղում: 1983 թ. ընդունվել եւ 1988 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1988-1981 թթ. ուսանել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայում, որն ավարտելով՝ 1991 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: 1991 թ. դասավանդել է Երեւանի պետական, «Գլաձոր» եւ «Հյուսիսային» համալսարաններում:

Ս. Սարգսյանի հեղինակած մենագրություններից յուրաքանչյուրին արժե ծավալուն հոդվածներ նվիրել: Այսպես. «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921 թթ.», «1885-1908 թթ. Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ», «Արմենիա պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում», «Սանահինի 1050-ամյա համալսարանը. համառոտ պատմություն», «Периодическое издание «Армения» у истоков армянской национально освободительной идеологии», «Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը եւ «Արմենիա» պարբերականը», «Արեւելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ.» եւ այլն, որոնք նոր խոսք են հայ պատմագիտության ասպարեզում: Նաեւ համահեղինակ է «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ պարբերական մամուլի պատմություն», «Հայ ազգային ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914թթ.)» հիմնարար երկերի:

**-Հարգելի Պրոֆեսոր, դուք ծնվել եք Զոլաքար գյուղում, որի բնակիչները եկել են Բագրեւանդ գավառից: Որտեղի՞ց են ձեր տոհմի արմատները, եւ ինչպե՞ս ձեր մեջ կերտվեց այն ամբողջական հայը, որ պիտի նվիրվեր ազգի պատմությունը վեր հանելու գործին:**

-Ես սերվում եմ երկու մեծ գերդաստաններից: Մայրական կողմի նախնիներս եղել են մշեցիներ, իսկ հայրական գերդաստանի նախնիները Ալաշկերտի Զիրո (Զիրավ) գյուղից են: Բոլոր մարտունեցիների նման հայրական ընտանիքս էլ մեծ էր (ութ եղբայր էինք եւ երկու քույր): Մեծացել եմ հոգեւոր ու մտավոր բարձր հասկանիշներով օժտված ընտանիքում:

Աշխույժ, մի քիչ էլ չարաճճի երեխա էի, բայց, որքան հիշում եմ, անհամ չարություններ չեմ արել: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի հայրս մեծ հեղինակության տեր էր, ուսուցիչ, պատմաբան եւ ինտելեկտուալ անձնավորություն: Մայրս ուսուցչուհի էր, հիսուն տարի անձնվիրաբար կրթեց եւ շատ սերունդների տառաճանաչ դարձրեց: Նրա աշակերտները, որ արդեն տատիկներ ու պապիկներ են, խոնարհվում են մորս հիշատակի առջեւ:

Մեր տանը գիր-գրականությունն առաջնային էր: Գրադարան ունեինք, որից օգտվում էին ընթերցասեր շատ մարդիկ: Այդ գրասեր միջավայրում ես եւս ընթերցասեր էի մեծանում: Վաղ տարիքում կարդացի «Հայ ժողովրդական հեքիաթների» բոլոր հատորները: Հետո անցա պատմավեպերին: Իսկ 9-10-րդ դասարաններում ստիպված վերընթերցեցի դրանք: Դա օգնեց, որպեսզի նորովի ընկալեի այդ ստեղծագործությունները: Երբ լինում եմ Փարիզում, անպայման այցելում եմ Լուվր ու մտովի զրուցում եմ «Մոնա Լիզայի» հետ: Արվեստաբան չեմ, բայց ինձ համար բացահայտել եմ երկու-երեք կարեւոր հասկանիշ. որ դիրքից նայում ես կտավին, ինքը քեզ է նայում: Երկրորդը, որ ավելի կարեւոր է. ինչ տրամադրությամբ նայում ես կտավին, նա նույնությամբ քեզ պատասխանում է. Ուրա՞խ ես, ժպտում է, տխու՞ր ես, թախծում է: Նման զգացողություն ունենում եմ ամեն անգամ Պարույր Սեւակ ընթերցելիս: Նրան ընկալելը եւս տարիների հետ ավելի է հասունանում:

**- Ո՞րն է եղել ամենակարեւոր պատգամը, որ ստացել եք ձեր ծնողներից:**

- Զավակների հանդեպ մայրերի վերաբերմունքն ինքնին հասկանալի: Քչախոս հայրս շրջապատում այնքան էր հարգված, որ կրտսեր տարիքից նրան վերաբերում էի պաշտամունքի մակարդակի: Մի անգամ առիթ եղավ (գուցե չափն անցել էի), երկար նայեց աչքերիս մեջ ու ասաց՝ հիշի՛ր տղաս, որեւէ իրավիճակում աշխատիր մարդ եւ տղամարդ մնալ: Միշտ հիշում եմ նրա խոսքերը եւ ամեն անգամ, երբ բացում եմ «փակագծերը», հասկանում եմ, թե այդ երկու բառով՝ Մարդ ու Տղամարդ, որքան շատ բան է ասել հայրս: Պատգամել է լինել նվիրյալ զավակ, ամուր ընտանիքի հայր ու պահապան, պատվախնդիր մարդ: Անհամեստ չհնչի, կարծում եմ դա ինձ հաջողվել է՝ շատ ծառեր եմ տնկել, տներ կառուցել եւ ամուր ընտանիք եմ ստեղծել: Երկու տղա ունեմ. Արթուրը իրավաբան է, Արմանը՝ պատմական գիտությունների թեկնածու, իսկ դուստրս՝ Անին, ֆինանսիստ: Ամենամեծ ձեռքբերումս համարում եմ այն, որ զավակներս կրթված են, հասել են որոշակի հաջողությունների, շրջապատում սիրված են ու հարգված: Թոռնիկներս նոր հոգեբանական, տիեզերական աշխարհ են: Զավակներիս վերաբերվել եմ որպես ընկերների, հորդորել, որ երբեք թույլ չտան ոտնահարել իրենց ինքնասիրությունը, որ նյութականը երբեւէ իրենց չկառավարի:



**- Ձեր ճանապարհին հանդիպած ո՞ր պրոֆեսորները դարձան ուղենիշ:**

-Դպրոցական տարիքից ուսուցիչներ են եղել հայրս, Հայոց պատմության ուսուցիչ՝ Աբրահամյան Մամիկոնը, Հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Անտոնյան Մովսեսը, որոնց պատգամները ուղեկցել են ինձ ողջ կյանքում: Նրանց տված գիտելիքները եղել են այն հիմնաքարը, որի վրա հետագայում կառուցվեց իմ գիտական ընթացքը: Համալսարանում ուսանելու տարիներին մեծ ազդեցություն է ունեցել ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը՝ գիտական ղեկավարս, կարեւոր են եղել պրոֆեսորներ Բաբկեն Հարությունյանի, Ստեփան Մելիք-Բախշյանի եւ մյուս դասախոսներիս ազդեցությունը:

**- Ո՞ր բեկումնային իրադարձությունը ձեզ բերեց հայ պատմագիտության ոլորտ:**

-Փակագծեր բացեմ: Սկզբում ընդունվել եմ ԵՊՀ-ի Իրավագիտության ֆակուլտետ: Սակայն հանգամանքների բերումով կիսատ թողեցի: Հետո ընդունվեցի ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետ: Առաջին կուրսից եւ՛ աշխատում էի, եւ՛ սովորում: Առաջին քննաշրջանից սկսած մինչեւ ավարտելս գերազանցիկ էի, անվանական թոշակառու: Պատմությունը սիրել եմ փոքրուց, քանզի հայրս պատմաբան էր: Զուգահեռները հասվեցին, երբ շարունակեցի ուսումս բուհում, ապա՝ ասպիրանտուրայում: Այդ ընթացքում ԽՍՀՄ-ը ինքնալուծարվեց եւ դժվարին ու անհասկանալի տարիներ էին: Աշխատեցի տուրիզմի ոլորտում, որը հնարավորություն ընձեռեց հաց վաստակել եւ աշխարհ տեսնել...

**-Դուք մեր հարցազրույցներից մեկում ասել եք. «հայ ժողովուրդը ձեւավորվեց մեծ դժվարությամբ, հզորների դեմ անզիջում պայքար մղելով, ուժեղացավ, դարձավ կայսրություն, այնուհետեւ 2000 տարի ենթարկվելով ծանր փորձությունների՝ կարողացավ հասնել մեր օրերը: Եվ դա շնորհիվ մեր հզոր գենի»: Պատմության բոլոր օրինաչափություններով պետք է չլինեինք: Ի՞նչ մարտահրավերների առաջ է կանգնած հայ էթնոգենը Արցախյան վերջին պատերազմից հետո:**

-Էթնոգենի խնդիրը ես երկար եմ ուսումնասիրել: Ժամանակակից գիտությունը դեռ սպառիչ պատասխաններ չունի այդ հարցում: Կան գիտական հզոր կենտրոններ, որոնք խորությամբ ուսումնասիրում են էթնոսների ծագումնաբանական եւ ժառանգական վարքը, դրանց հիման վրա կոդավորում ժողովուրդներին: Գիտեն, թե որ ազգին ինչ է անհրաժեշտ, որ բարեկամանան եւ օգտագործեն հօգուտ իրենց շահերի: Հայ ժողովրդին եւս փորձել են կոդավորել, բայց դեռեւս չի հաջողվել, քանի որ հայն հնագույն այն ազգն է, որն աշխարհ է եկել հատուկ առաքելությամբ: Ցավոք, որոշ հասկանիշների պատճառով 2000 տարի շարունակ կենսատարածքի, ժառանգական, հոգեկերտվածքի առումով միայն կորցրել ենք: Այսօր էլ պատմական տիրույթում ձեւավորված հոգեկերտվածքի արդյունքում խոցելի ենք եւ մեզ բավական հեշտ է տարբեր թեւերի բաժանելը: Մեր այսպես կոչված «թավշյա հեղափոխությունը» նույնպես դրա արդյունքներից մեկն էր: Դարեր շարունակ, գտնվելով հզորների բախման կիզակետում (խեթա-ասորական, Հռոմ-Բյուզանդիա-Պարսկաստան, արաբական, թուրք-սելջուկյան, մոնղոլական, ռուսական) տիրապետության տակ, ենթարկվեցինք բոլոր այդ էմիգրացիոն փոթորիկներին, որոնք, ցավոք, անհետեւանք չանցան եւ թողեցին իրենց հետքը մեր հոգեբանության վրա: Եվ հայ ժողովուրդն իր գոյատեւման համար միշտ սրա կամ նրա հովանու ներքո է ելք փնտրում: Այստեղից էլ՝ հեշտ է դառնում նրան տարբեր թեւերի բաժանելը: Այսօր էլ դա հստակ երեւում է արեւմտամետների ու ռուսամետների բաժանված մեր քաղաքական դաշտում:

**-Հայոց պատմության էջերը լի են ազգային-ազատագրական պայքարի բազում դրվագներով: Եվ այդ գոյապայքարի դաշտից լսվում է Խրիմյան Հայրիկի ձայնը. «Յուր ազգն ու հայրենիքը չսիրող անձը մարդկային կյանքի մեջ ապրելու իրավունք չունի»: Մեր գոյապայքարը չի ավարտվել: Ի՞նչ ճանապարհով պիտի կարողանանք վերականգնելով պատմական արդարությունը:**

- Այս հարցին երկու մոտեցում կա. խոնարհվելով Խրիմյանի պատգամների առջեւ՝ նշեմ, որ այս ձեւակերպումը փոքր-ինչ հնացած է, քանզի մեր հայրենակիցներից շատերը ճակատագրի բերումով ապրում են ոչ Հայրենիքում: Եվ եթե այսօր որեւէ սփյուռքահայի ասենք, որ դու քիչ հայրենասեր ես, նա կարող է վիրավորվել եւ ամենանախիստ ձեւով հակադարձել: Ինչ վերաբերում է ազատագրական պայքարին, ապա պիտի խոստովանենք, որ դրանք հիմնականում ավարտվել են պարտությամբ: Օրինակ՝ 19-րդ դարի մեր ամենանվիրական՝ Հայդուկային շարժումը, որին ազգը նվիրաբերեց իր ամենապայծառ զավակներին եւ միջոցները: Արդյունքում՝ կորցրեց իր ծաղիկ երիտասարդությանը, եւ մեր հայրենիքը, նյութական ռեսուրսները մնացին թուրքերին, կորցրեցինք մեր պատմական բնօրրանը: Արդյո՞ք ազգային-ազատագրական պայքար չէր 1988-ը: Իհարկե, ազգային-ազատագրական պայքար էր: Բայց այսօր, ցավոք, պատմությունը կրկնվեց, եւ մենք պարտության վկան եղանք: Մենք գտել ենք այդ ամենի ինքնաարդարացման ձեւը՝ բարոյական հաղթանակ: Այնինչ, բարոյական հաղթանակը մեզ համար պիտի դառնա ոչ թե ինքնաարդարացման միջոց, այլ շչակի նման պիտի սղոցի մեր ուղեղները, որ մենք սթափվենք:

**- Ղեւոնդ Ալիշանը մի ուղենշային հոդված ունի ՝ «Ծանիր զքեզ»: Անդրադարձել է ազգի դաստիարակության եւ ինքնաճանաչողությամբ մեր ուղին հարթելու հիմնահարցերին: Որտե՞ղ է խզվել հայ ժողովրդի հոգեւոր կապը իր երբեմնի հզոր անցյալի հետ, որը մեզ խանգարում է առաջ ընթանալ:**

-Խզումն առաջացավ 20-րդ դարի սկզբին: Նպաստեցին առաջին համաշխարհային պատերազմը, Հայոց ցեղասպանությունը, պետականության վերականգնման պատրանքը եւ, իհարկե, Խորհրդային տարիները: Կոմունիստական դոգմատիզմն ամեն ինչ վերագրում էր կուսակցությանը եւ մասսաներին, իսկ խելացի անհատը ստվերվում էր: Արգելվեցին բոլոր մեծերը, նրանց լուսանկարն ունենալը եւ անունը հնչեցնելը դարձան հանցագործություն: Աղավաղվեցին բոլոր տեսակի կապերը մեր ժառանգությա հետ: Մեծացավ սերունդ, որը «բռնաթափված» էր անցյալի կապանքներից: Հետաքրքրականն այն է, որ 1956 թ. ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո, երբ այդ կապանքները թուլացան, հայրենաբաղձության ժայթքում ապրեցինք, որը ցույց տվեց կարեւոր բան. 1. Պատմական հիշողությունը ջնջելն անհնար է: 2. Մեր արյան մեջ գոյություն ունեցող հայրենաբաղձությունը, անարատ հայրենասիրությունն ընդամենը պատնեշված էր եւ ամբողջ թափով ժայթքեց 1965 թ. Ազգային զարթոնքի, Հայոց ցեղասպանության հուշակոթողի կառուցման եւ Սփյուռքի կոմիտեի ստեղծման տեսքով:

Արցախյան շարժումը նախաձեռնած սերնդից շատերը ռուսական կրթություն ունեին, հայերեն էլ չգիտեին, սակայն ավելի շատ նվիրյալ հայրենասերներ տվեց, քան մերօրյա, «ազատ ու ժողովրդավար» հասարակությունը: Երբեք չպիտի անտեսենք նաեւ Սփյուռքի կարեւոր դերակատարությունը, որը բոլշեւիկյան կապանքներից ազատ լինելով՝ անշեջ էր պահել հայրենաբաղձության կրակը, որը միախառնվեց Հայաստանի ազգային պայքարի կրակին, եւ մենք ունեցանք Արցախյան ազատամարտի հաղթանակը:

**-Հայոց նորագույն պատմությունն սկսվեց Արցախյան հաղթանակով, որը մեզնից խլվեց: Եվ դուք հոդված էիք գրել, որ Հայաստանը կա՛մ լինելու է մեծ ու հզոր երկիր, կա՛մ չի լինելու առհասարակ: Եվ ձեր հոդվածը եզրափակել էիք հավերժական Հայաստանին հասնելու գաղափարով: Ո՞րն է լինելու դրան հասնելու ճանապարհը:**

-Կարծում եմ, որ Հայաստանը, այո, լինելու է: Ինձ հաճախ անուղղելի լավատես են կոչում: Միգուցե մեր պատկերացրած 300000 քառ. կմ տարածության սահմաններում չլինի, բայց որ Հայաստան պետությունը լինելու է միշտ՝ իր հատուկ առաքելությամբ աշխարհ եկած հայ ժողովրդով, դրանում համոզված եմ: Իսկ ուղին մեկն է. եթե ես այսօր հիշում եմ Գրիգոր պապիս ու նրա տված խորհուրդները, շարունակ զգում եմ հորս խրախուսող ու զգաստացնող հայացքը եւ փորձում եմ դրանք փոխանցել իմ թոռներին, հենց դա էլ կլինի մեր լինելության բանաձեւը, մեր Կոդի շարունակության հիմնադրույթը, որին չեմ կասկածում...

Շատ կուզենայի տեսնել հայեցի դիմագծով, հայեցի հոգեբանությամբ, հիմնազուրկ դրույթներից ձերբազատված, ամենակարեւորը՝ օտարամոլությունից դուրս եկած սերունդ, որը եւ պիտի ապահովի մեր Կոդի շարունակականությունը...

Զրուցեց ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ

# Հայաստանը, Ռուսաստանը եւ ինտեգրվող թյուրքական աշխարհը

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**

Քաղաքական վերլուծաբան, ԵՊՀ Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի տնօրեն Եվրասիական փորձագիտական ակումբի համակարգող

***Վերջերս մեզանում թեժացող քաղաքական քննարկումներում մենք լսում ենք կարծիքներ ու դիրքորոշումներ, որոնք գիտականորեն հիմնավորված չեն, հիմնականում զգացական են եւ քիչ կապ ունեն գլոբալ ու տարածաշրջանային իրողությունների հետ: Այդ պատճառով կարեւոր ենք համարում ընթերցողների ուշադրությանը ներկայացնել մեր վերլուծականը արդի տարածաշրջանային մեծ ու փոքր գործընթացների եւ դրանում Հայաստանի տեղի ու դերի վերաբերյալ:***

## Թյուրքական աշխարհի ինտեգրման գործընթացը թափ է հավաքում

Հայտնի է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարությունը, ի թիվս այլ ծավալապաշտական նպատակների, խնդիր էր դրել հաղթել Ռուսաստանին եւ ստեղծել մի մեծ թուրքական պետություն, որը կտարածվեր Միջերկրական ծովից մինչեւ Ալթայ: Ռուսական կայսրության փլուզումից անմիջապես հետո թուրք էմիսարները ձգտում էին համախմբել նորաստեղծ Ադրբեջանի եւ Կենտրոնական Ասիայի ժողովուրդներին, մասնակցելով հակախորհրդային բասմաչական շարժմանը եւ փորձելով բոլշեւիկյան կառավարության հետ երկխոսություն ծավալել մեծ թուրքական աշխարհ ստեղծելու հնարավորության հարցով:

Հայտնի է, որ այդ ջանքերը այն ժամանակ հաջողություն չունեցան, եւ ձեւավորվող խորհրդային պետությունը սկզբում Հարավային Կովկասում, իսկ այնուհետեւ նաեւ Կենտրոնական Ասիայում ձեւավորեց դեպի Մոսկվա կողմնորոշված խորհրդային հանրապետություններ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիան դարձավ ՆԱՏՕ-ի անդամ, մեծապես կախված լինելով ԱՄՆ-ից եւ Մեծ Բրիտանիայից, եւ Խորհրդային Միության ու ՆԱՏՕ-ի (այդ թվում՝ Թուրքիայի) միջեւ կախվեց «երկաթե վարագույր»:

Խորհրդային տարիներին, իրականում, թե՛ Ադրբեջանի, թե՛ Կենտրոնական Ասիայի հանրապետությունների, թե՛ Ռուսաստանի թյուրքալեզու ժողովուրդների մոտ միշտ մի թաքնված հետաքրքրություն է եղել դեպի Թուրքիան, որի հետ բազմաթիվ կապեր են եղել: Սակայն, գաղափարախոսական պայքարի բերումով, մշակութային եւ հասարակական շփումները նրանց միջեւ հասցված են եղել հնարավոր նվազագույնի: Խորհրդային Միության փլուզումից հետո անգլոսաքսոնական ստրատեգները Թուրքիայի համար նախապատրաստեցին Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների առաջնորդի եւ կազմակերպողի դեր:

Պետք է հասկանալ, որ ետխորհրդային իրողությունները որակական նոր երեւույթներ են ստեղծում համաթուրքական համախմբման համար: Եթե հարյուր տարի առաջ թուրքերի երազանքը կայանում էր Մեծ Թուրանը Թուրքիային վերոհիշյալ երկրները միացնելու միջոցով, ապա այժմ Ադրբեջանը եւ Կենտրոնական Ասիայի չորս թյուրքական հանրապետությունները անկախ են, ինքնիշխան եւ հաջողությամբ ստեղծում են սեփական պետականությունը: Այսպիսով այսօր այդ երկրները Թուրքիային միացնելու օրակարգային հարց գոյություն չունի: Բազմաթիվ պատճառներով դա, ուղղակի, անհնար է: Թուրքիան աշխարհի 15-րդ տնտեսությունն է եւ շարունակում է ջանքեր գործադրել աշխարհիկ պետության իր մոդելը թյուրքական պետություններին հրամցնելու ուղղությամբ: Իրականում, թուրքական քաղաքական, մշակութային եւ քաղաքակրթական ազդեցությունը հարավկովկասյան եւ կենտրոնաասիական տարածաշրջաններում անշեղորեն մեծանում է: Բայց հստակ պետք է հասկանալ, որ ղազախները կերտում են իրենց պետականությունը, արձանագրում են տպավորիչ տնտեսական ու գիտամշակութային հաջողություններ եւ խնդիր են դրել մտնելու աշխարհի 40 ամենազարգացած երկրների շարքը: Ուզբեկստանը ամենամեծ բնակչությունը ունեցող կենտրոնաասիական պետությունն է եւ նույնպես վերջին տարիներին արձանագրում է տպավորիչ հաջողություններ:

Ազդեցիկ վերլուծաբանների կարծիքով, տնտեսական գործընթացները մոտակա տարիներին կարող են զարգանալ այնպես, որ Ղազախստանը եւ Թուրքմենստանը նույնիսկ շնչին ընկնող ավելի բարձր ՀՆԱ-ի ցուցանիշ ունենան, քան Ռուսաստանը (Թուրքիայի ցուցանիշին հավասար): Այս ամենը գալիս է հանգեցնելու այն մտքին, որ հավասարը հավասարի իրավունքով նախկին ԽՍՀՄ-ից ծնված թյուրքալեզու պետությունները ոչ թե ընդունելու են Թուրքիայի գերիշխանությունը, այլ գնալու են նրա հետ համապարփակ եւ անընդհատ թափ հավաքող ինտեգրման ճանապարհով: Այս երկրների քաղաքական վերնախավերում հիմա խոսում են, որ համաթյուրքական ինտեգրումը պաշտպանական նշանակություն ունի եւ կոչված է դիմակայելու մի կողմից ահագնացող չինական ազդեցությանը, մյուս կողմից՝ ռուսական ազդեցությանը: Այս երկու ազդեցությունները չեզոքացնելու նպատակով թյուրքական պետությունները վարում են բավական ճկուն, բազմավեկտոր, պրոակտիվ քաղաքականություն: Թուրքիան այժմ վերընթաց զարգացման գործընթացում է, եւ նրա տնտեսական հնարավորությունները մեծանալուն զուգահեռ անընդհատ մեծանալու է նաեւ ազդեցությունը թյուրքական աշխարհի վրա: Դա առաջին հերթին վերաբերում է Ադրբեջանին, որը քաղում է պտուղներ իր ժամանակին հռչակած «մեկ ազգ, երկու պետություն» քաղաքականությունից: Թուրքիայի օգնությամբ Ադրբեջանը հավակնում է դառնալ Հարավային Կովկասի գերիշխող պետություն եւ թուրք-ադրբեջանական տանդեմը միջազգային եւ տարածաշրջանային քաղաքականության բոլոր նկատելի հարցերում հանդես է գալիս եւ հանդես է գալու միասնաբար:

## Ռուսաստանը եւ եվրասիական ինտեգրումը

Հիմա արդեն մեր հասարակության մեջ քաղաքագիտական եւ միջազգայնագիտական կրթություն ստացած կադրերի շնորհիվ հայտնի է, որ Ռուսաստանը սկսել է դավանել եվրասիականության գաղափարախոսությունը նոր շեշտումներով ու խմբագրումներով: Ռուսական կայսրության փլուզման եւ Խորհրդային Միության ստեղծման արդյունքում շատ ռուս տաղանդավոր մտածողներ քննարկում էին այն հարցը, թե ինչպե՞ս ներդաշնակորեն ամրապնդել Բալթիկ ու Սեւ ծովերից մինչեւ Խաղաղ օվկյանոս ընկած ահռելի տարածքի անվտանգությունն ու կայունությունը: Ամենատարբեր պատճառներով մի քանի ռուս մտածողներ հիմնավորեցին այն սկզբունքը, որ այդ ներդաշնակ համակեցությունն ու քաղաքակրթական զարգացումը հնարավոր է ապահովել միայն արեւելյան սլավոնների եւ թյուրքական տարրի ներդաշնակ գոյակցության եւ փոխգործակցության միջոցով:

Նախագահ Վ.Պուտինը իր իշխանության առաջին տարիներից ցույց է տվել իր հետաքրքրությունը եվրասիական գաղափարների նկատմամբ: Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգերը վերջին քսան տարում հիմնավորել են ԽՍՀՄ փլատակների վրա ստեղծված ԱՊՀ-ի, ԵԱՏՄ-ի եւ ՀԱՊԿ-ի շրջանակներում Ռուսաստանի համագործակցությունը թյուրքական պետությունների հետ ամրապնդելու խնդիրը:

Երբ մենք ասում ենք, որ թյուրքական պետությունները ինտեգրվելու են Թուրքիայի շուրջ, պետք է հասկանանք, որ Ռուսաստանն այսօր առաջարկում է իր դերը ինտեգրացիոն գործընթացները առաջնորդելու եւ կազմակերպելու գործում: Ռուս գաղափարախոսները հարցնում են ետխորհրդային պետություններին (մասնավորապես նրանց, ովքեր չեն գնացել բալթյան երկրների, Ուկրաինայի եւ Մոլդովայի ճանապարհով)՝ արդյոք փոխշահավետ եւ ակնառու չի՞ եղել նրանց զարգացումն ու բարգավաճումը Ռուսական կայսրության եւ Խորհրդային Միության կազմում: Ավելին, Ռուսաստան-Ղազախստան, Ռուսաստան-Ուզբեկստան, Ռուսաստան-Թուրքմենստան եւ Ռուսաստան-Ղրղզստան համագործակցությունը արդյոք շահավետ եւ իրենով գրավիչ չէ՞ վերջին քսան տարվա տպավորիչ օրինակներով: Ինչ վերաբերում է գիտական, մշակութային եւ քաղաքակրթական համագործակցությանը, ապա Ռուսաստանի վերջին երեք տարվա զարգացումները գալիս են հաստատելու, որ, լինելով աշխարհի 5-րդ տնտեսությունը եւ ունենալով բավականաչափ ռեսուրս ազդեցության եւ ձգողականության կենտրոն դառնալու համար՝ Ռուսաստանը պատրաստ է անշեղորեն մեծացնել այդ համագործակցության ծավալները եւ ակնհայտորեն դրական դեր ունենալ այս երկրների զարգացման մեջ: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նա, իր վրա վերցնելով «Հյուսիս-Հարավ» ռազմավարական առանցքի առյուծի բաժնի դերը, պատրաստ է Ռուսաստանի հետ խորացնել դաշնային համագործակցությունը եւ փոխգործակցությունը, բոլորովին ոչ Թուրքիայի հետ ինտեգրման հաշվին: Ռուսաստանին բավարարում է այսօրվա Ադրբեջանի կեցվածքը եւ նա հույս ունի, որ Ադրբեջան-Թուրքիա-Ռուսաստան եռանկյունին ուղղված է Ռուսաստանի շահերի ամրապնդմանը Հարավային Կովկասում: Ռուսաստանում նույնիսկ ասում են, որ ունենալով ավելի քան 20 մլն. մուսուլման թյուրքեր, պետք է լրջորեն մտածել Իսլամական համագործակցության կազմակերպության եւ Թյուրքական պետությունների միջազգային կազմակերպության լիարժեք անդամ դառնալու մասին:

Միանգամայն հասկանալի է, որ սրա նպատակը նախ եւ առաջ թույլ չտալն է այնպիսի ներքին ապակայունություն, որը կհանգեցներ ազգամիջյան թշնամանքին Ռուսաստանում ապրող էթնոսների միջեւ: Թե՛ Ռուսաստանը, թե՛ Ղազախստանը եւ թե՛ մյուս թյուրքական պետությունները էթնիկական առումով բազմազգ են եւ բազմալեզու, եւ համերաշխության ու հանդուրժողականության մթնոլորտի պահպանությունը այնտեղ առաջնային կարեւորության հարց է: Եվրասիական ինտեգրումը վերջին շրջանում հանդիպում է որոշ դժվարությունների իր առաջընթաց շարժման մեջ եւ այդ դժվարությունները մեծամասամբ քաղաքական բնույթի են: Որպեսզի եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացը մոտակա քսան տարում (մինչեւ 2045թ.) չդոփի տեղում եւ շարունակի ծառայել Ռուսաստանի ու մյուս երկրների տնտեսական զարգացման գործին, պաշտոնական Մոսկվան որոշել է այն համադրել Շանհայի համագործակցության կազմակերպության եւ ԲՐԻՔՍ-ի գործընթացների հետ: Նախագահ Վ.Պուտինը ձեւակերպել է այդ խնդիրը իբրեւ Մեծ եվրասիական գործընկերություն: Մինչ տնտեսագետները, քաղաքագետներն ու միջազգայնագետները աշխուժորեն քննարկում են, թե ի՞նչ կոնկրետ զարգացում կունենա Մեծ եվրասիական գործընկերությունը, գործարարներն ու ֆինանսիստները շարունակում են ակնկալել նորանոր օգուտներ ինտեգրացիոն գործընթացներից:

## Հայաստանը վերոհիշյալ գործընթացների մեջ

Մենք խորապես համոզված ենք, որ սխալ է հակադրել Հայաստանը ծավալվող տարածաշրջանային գործընթացներին: Մենք ընթերցողների ուշադրությանն արդեն ներկայացրել ենք մեր փորձագիտական դիտարկումները «3+3» խորհրդատվական հարթակի դրական նշանակության մասին: Մենք պետք է հասկանանք, որ Հարավային Կովկասի խնդիրների, այդ թվում Հայաստանի հարցերով, Թուրքիան խորհրդակցելու է նախ եւ առաջ Ռուսաստանի, իսկ այնուհետեւ, հնարավոր է, նաեւ Իրանի հետ: Եթե մենք նույնիսկ բացառենք Ռուսաստանի միջամտությունը հարավկովկասյան տարածաշրջանում իրականացվող քաղաքական, ռազմական եւ այլ խնդիրներում, մենք չենք ստանալու արտոնյալ դիրք Թուրքիայի հետ բանակցություններում: Ուրեմն, այստեղից մենք անում ենք եզրակացություն, որ հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական հարաբերությունների զարգացումը չի կարող եւ չպետք է լինի Ռուսաստանի եւ Իրանի հաշվին: Տնտեսական ինտեգրման գործընթացներից մեր օգուտը ակնհայտ է, եւ այստեղ մենք հարկ չենք համարում կրկին այն վերաշարադրել: Ինչ վերաբերում է քաղաքական կայունության ամրապնդմանը, որը կնպաստի մեր ինքնիշխանության ամրապնդմանը, ապա դա հնարավոր է միայն Հարավային Կովկասում Ռուսաստանի եւ Թուրքիայի շահերի համադրման արդյունքում: Եթե նման համաձայնեցում ու համադրում չլինի, Հայաստանը, իբրեւ տարածաշրջանի ամենափոքր երկիր, կարող է ունենալ ծանրագույն կորուստներ: Դեռեւս բոլորովին չի երեւում, որ Արեւմուտքը Հայաստանին կարող է տալ անվտանգության այնպիսի երաշխիքներ, որոնք սաստեին Ադրբեջանին Հայաստանի հանդեպ զավթողական պլաններից: Նման երաշխիքների Հայաստանում սպասում են սրտատրոփ: Պատմությունը հուշում է, որ նման գործնական երաշխիքներ կարող են եւ չստացվել: Հետեւաբար, այս պատմական փուլում, երբ Ռուսաստանը մի կողմից զբաղված է Ուկրաինական ճգնաժամով, իսկ մյուս կողմից զարգացնում է համագործակցությունն ու փոխգործակցությունը Թուրքիայի եւ թյուրքական աշխարհի հետ, մեզ հարկավոր է մշակել ներքաղաքական եւ արտաքին քաղաքական այնպիսի հիմնավորումներ, որոնք կապահովեին մեր անվնաս, ներդաշնակ ներկայությունը Հարավային Կովկասում: Այն քաղաքական գործիչները, որոնք կարծում են, որ հայ-ռուսական դաշինքը կարող է հակադրվել համաթյուրքական դաշինքին, ուղղակի չեն հասկանում այսօր աշխարհում ծավալվող գործընթացների ներքին տրամաբանությունը:

Հայաստանի ներսում անհրաժեշտ է թափանցիկ եւ գիտականորեն հիմնավորված քննարկում նոր քաղաքական իրողությունների պայմաններում Հայաստանի կենսունակ քաղաքականությունը հիմնավորելու նպատակով:

Լինելով օտար տարածաշրջանային իրողություններում եւ չունենալով լավ հարաբերություններ մեծ տարածաշրջանի բոլոր երկրների հետ, մենք կարող ենք ունենալ միանգամայն կանխատեսելի լուրջ դժվարություններ:

# Երկրայինի սահմանը հատեց մահկանացու Վան Սողոմոնյանը

Ես տեսել եմ, թե ինչպես են արվեստի բազմաթիվ սիրահարներ Գերմանիայում դիտում նրա նկարների, գույների՝ հատկապես վառ դեղինի, համարձակ կարմիրի ցոլարձակ գգվանքի շուրջ, տեսել եմ, թե ինչպես են ցուցասրահում երկար կանգ առնում որսալու նրա խոհը, անշարժ սեւեռումով գտնելու՝ պլաստիկական սինթեզի «միջոցով» աշխարհի հետ զրույց ծավալող նրա հղացած անզուգական նորարար առարկաների մեջ արվեստի աշխարհն իրենց շաղկապող թելը: Տեսել եմ, թե ինչպես են շոյել նրա մատների տակ շունչ առած կավը, որ խեցեգործության հրաշալի նմուշ է դարձել...



*Վան Սողոմոնյան «Պատկեր»*



Տեսիլքների եւ երազների լուսեղեն պատկերներ որոնող, իրականի եւ տիեզերականի գունաբաժանը տեսանող, ու մեր ընկալումը ազգայինի ու համամարդկայինի ամբողջականության հասցնող վարպետը՝ **Վան Սողոմոնյանը** հունիսի 5-ին հրաժեշտ տվեց այս աշխարհին:

Ուր ներկա էր լինում, հագեցնում էր միջավայրը. Թիֆլիսյան առոգանությամբ նրա հայոց լեզուն, լայնեզր գլխարկը, պարթեւ հասակը տարաշխարհիկ ձգողականություն էր ստեղծում: Այդ մագնիսը աշխարհի բազմաթիվ թանգարաններում ցուցադրվող նրա ձեռքի ու մտքի ստեղծածի մեջ, բարեբախտաբար շարունակվում է, Վիսբադենից տարիներ առաջ Երեւանում վերջնական հանգրվան գտած նրա արվեստանոցում դեռ շատերին է գերելու, բացահայտել տալու արդի կերպարվեստի հսկաներից մեկի մտաշխարհը, տիեզերական անչափելի բովանդակությամբ:

«**Ազգ**»ի անկեղծ ցավակցությունը Վան Սողոմոնյանի տիկնոջը՝ նկարչուհի, բանաստեղծական գրքերի հեղինակ **Նոնա Գաբրիելյանին**, դստերը՝ նկարչուհի **Լիլիթ Սողոմոնյանին**, թոռանը՝ նկարիչ **Գայ Ղազանչյանին**, փեսային՝ նկարիչ **Գագիկ Ղազանչյանին**:

Վան Սողոմոնյանի հուղարկավորությունն այսօր՝ հունիսի 7-ին, ժամը՝ 13:00 Կոնդի սուրբ Հովհաննես եկեղեցուց:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Լեռնագոգ-1 հնավայրում հայտնաբերվել է առաջին բնակատեղիներից մեկը

«Հայաստանի վաղ պատմական փուլի հնագիտական հետազոտություն» ծրագիրն իրականացվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ Ճապոնիայի Տոկայի համալսարանի միջեւ 2017թ. կնքված համաձայնագրով:

Աշխատանքներն իրականացվում են Ճապոնիայի Կրթության, մշակույթի, սպորտի եւ գիտության նախարարությանը կից Գիտության զարգացման ճապոնական ֆոնդի (JSPS KAKENHI Fostering Joint International Research), ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ «Արենի-1 քարայր» կոնսորցիումի ֆինանսավորմամբ:

ՀՀ Արմավիրի մարզի Լեռնագոգ-1 հնավայրի հետազոտությունները ցույց են տվել, որ Ք.ա. VIII-VII հազարամյակների սահմանին այստեղ ապրել է համայնք, որի բնակիչները տիրապետել են վաղ անասնապահությանը եւ կավաշաղախից շինություններ կառուցելու տեխնիկային: Սա ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ տարածաշրջանում հայտնի վաղ անասնապահների առաջին կայուն-բնակատեղիներից է: Լեռնագոգ-1-ի պեղումներն անշուշտ ունեն կարեւորագույն նշանակություն հին աշխարհում առաջին նստակյաց համայնքների հետազոտության գործում:



«Հայաստանի նեոլիթացման գործընթացի ամենակարեւոր խնդիրը լեռնային գոտիներից հայտնի վաղհոլոցենյան հնավայրերի եւ Արարատյան դաշտի բնակատեղիների միջեւ փոխհարաբերությունն է: Ժամանակագրական տեսանկյունից գոյություն ունի որոշակի ժամանակագրական բաց այս երկու խմբի հնավայրերի միջեւ:

Հայաստանի վաղհոլոցենյան փուլի համար բազային հնավայրերից մեկի՝ Ափնագյուղ 8 (Քմլո - 2) քարայրի համար ստացված ռադիոածխածնային տվյալները ցույց են տալիս Ք.ա11 - 8-րդ հազարամյակների սահմանը: Հնավայրի համար ստացված ամենաերիտասարդ տարեթիվը Ք.ա7400 է: Այս տարեթվի եւ Արարատյան դաշտի նեոլիթյան բլուր-բնակատեղիներից ստացված տարեթվերի միջեւ, որոնք թվագրվում են Քա 6-րդ հազարամյակով, գոյություն ունի 1000 տարվա ժամանակագրական դադար: Մասնագետները պարզել են, որ Լեռնագոգում ապրել է համայնք, որը տիրապետել է կավաշաղախից շինություններ կառուցելու տեխնիկային: Այն գալիս է լրացնելու եւ փոխելու տարածաշրջանի նեոլիթ-էնեոլիթյան շրջափուլի մշակույթների մասին առկա պատկերացումները:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

# Միջազգային գիտաժողով Երեւանում

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մաթեմատիկայի ինստիտուտում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «Օպերատորների տեսություն եւ հարմոնիկ վերլուծություն» թեմայով: Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտը եւ ՌԴ Հարավային դաշնային համալսարանը:




Գիտական զեկուցումներով հանդես եկան առաջատար գիտնականներ Բելգիայից, Իտալիայից, Իսրայելից, Հայաստանից, Չինաստանից, Պորտուգալիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Սերբիայից: Գիտաժողովի արդյունքները կներկայացվեն «Mathematical Sciences» եւ «Lobachevskii Journal of Mathematics» ամսագրերի հատուկ համարներում:

OTHA SPRING նախաձեռնությունը մեկնարկել է 2011 թվականին: Նպատակն է համախմբել մասնագետների աշխարհի տարբեր երկրներից եւ ամրապնդել համագործակցությունը մաթեմատիկայի բնագավառում: OTHA SPRING-ը Երեւանում անցկացվել էր նաեւ 2023 թվականին եւ նվիրված էր ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյակին: Գիտաժողովի արդյունքները հրապարակվել են միջազգային հրատարակչական «Springer» ընկերության կողմից՝ անգլերեն եւ հայերեն լեզուներով:

Անշուշտ միջազգային համագործակցությունը կնպաստի գիտության զարգացմանը մեր երկրում:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
“AZG” Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 06.06.2024, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունեաց 70ա: